Շաբաթաթերթ
14 հունվարի 2026թ.
№ 1 (651)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468
9 771829 346006 26001 >

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Ավանդույթի ուժով աքսիոմատիկ ճշմարտություն դարձած «Տղան պետք է ծառայի» սկզբունքը զորակոչի օրերին Գորիսում վերածվում է իսկական տոնախմբության:

2026-ի առաջին զորակոչը Գորիսում. բարի ծառայություն մեր տղաներին

Ինչպես միշտ, վաղ առավոտվանից Գորիսի զինկոմիսարիատի շրջակայքից հայրենասիրական երաժշտության խրոխտ հնչյունների թնդյունը ողողում է քաղաքի գրեթե բոլոր անկյունները: Իսկ դա նշանակում է, որ այդ ժամին քնած մարդն էլ պիտի ուրախանա՝ զորակոչ է...

2026 թվականի հունվարի 7-ին՝ տարվա առաջին զորակոչի շրջանակում, Գորիսում հանդիսավորապես բանակ ճանապարհվեցին Գորիս, Տեղ, Տաթև համայնքների մեծ թվով նորակոչիկներ:

Բոլորը մեկ մարդու պես ժամանակին ներկայացան զինկոմիսարիատ, անցան բժշկական ստուգման վերջին փուլը, համարվեցին մեկուկես տարվա ժամկետային ծառայության համար պիտանի:

Տեղի ունեցավ հանդիսավոր հանրահավաք, որին մասնակցեցին հատուկ բանակային կորպուսի հրամանատարը, Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի հոգևորականներ, բազմաթիվ նորակոչիկներ՝ հարազատներով, բարեկամներով, ընկերներով:

Միջոցառումը վարող Նելլի Արզումանյանը զորակոչը համարեց Գորիսի պատմական օրերից մեկը.

– 2026 թվականը նժդեհյան տարի է, և փառավորվում ենք Նժդեհի հերոսական կերպարով ու հայրենասիրական վեհ գաղափարներով: Գորիսում է իր մարտական ուղին կերտել Լեռնահայաստանի արծիվը: Նժդեհը Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում է օծվել որպես Սպարապետ: Փոխվել են ժամանակները, փոխվել են սերունդները, սակայն չեն փոխվել հայրենիքի հանդեպ մարդկանց անհուն սերն ու նվիրվածությունը, նաև հավատարմությունը Նժդեհի գաղափարներին:

Հատուկ բանակային կորպուսի զորամասերի հոգևոր սպասավորի հնչեցրած Տերունական աղոթքին հաջորդեց նրա օրհնանքն ու բարեմաղթանքը նորակոչիկներին, նրանց գերազանց ծառայություն իրականացնելուն ուղղված եղբայրական հորդորն ու խրատը:

Ելույթներ ունեցան հատուկ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Արմեն Գյոզալյանը, Սյունիքի զինվորական կոմիսարիատի զորահավաքային բաժնի պետ, զինվորական կոմիսարի տեղակալ, գնդապետ Մանուել Մարտիրոսյանը, զորամասի սերժանտական խորհրդի նախագահ, սերժանտ Վելիխան Ստեփանյանը:

Շարունակությունը՝ էջ 2

Սյունյաց աշխարհը, որ եղել ու մնում է հայոց անկախ պետության և ինքնիշխանության վեմ-քարը, իր հավատավոր զավակներով Հայոց նվիրապետ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի հետ է

...Եվ Հայ առաքելական եկեղեցում որևէ բարենորոգում կարող է անել միայն ու միայն հայոց ազգային–եկեղեցական ժողովը կամ այդ ժողովի կողմից ստեղծված խորհուրդը:

Սուրբ Հովհան Որոտնեցու, Սուրբ Գրիգոր Տաթևացու, Սուրբ Մովսես Խոտանանցու և Սյունյաց աշխարհի մյուս տիեզերահռչակ վարդապետների, հոգևոր հանճարների ժառանգությամբ սնված ու այդ ժառանգությամբ առաջնորդվող սյունեցին չի կարող օրինավոր համարել որևէ այլ նախաձեռնություն...

Հիշենք նաև՝ հայոց մեջ առաջինը Սյունիքում են առաքյալները Քրիստոսի արեգակնափայլ լույսը տարածել, ինչի մասին վկայում է Սյունյաց ստուգապատում պատմիչ Ստեփանոս Օրբելյանը:

Ուրեմն և՝ շարունակենք հավատարիմ մնալ ամենայնի տեր և օրինաբանյալ Տիրոջ ու նրա առաքյալների, ինչպես և Սյունյաց աշխարհի մեծահամբավ վարդապետների ավանդույթներին. ամեն:

05.01.2026

Կարդացեք ՀՀ սահմանադրություն

Հոդված 17
1. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:
2. Կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից:
Հոդված 18
1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:
2. Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:

Մեղրու ճանապարհաշինական ընկերությունը, որի գործունեությանը ծանոթանալիս անհնար է չզգալ Արևիք աշխարհի սրտի հավերժական տրոփը

Մեր օրերում Մեղրու տարածաշրջանի հետ կապված ամեն մի հարց հետաքրքրում է յուրաքանչյուր արժանապատիվ հայորդու: Իսկ երբ խոսքն առնչվում է «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊ ընկերությանը, ապա դա արժանանում է առանձնահատուկ ուշադրության, քանզի առանց այդ կազմակերպության գործունեության՝ հնարավոր չէ ընդհանրական պատկերացում կազմել տարածաշրջանի մասին:

Ուստի և՝ 2025-ի ու 2026-ի սահմանագծում անհրաժեշտ համարեցինք հանդիպել Ազատ Գասպարյանի հետ և զրույց ունենալ մեզ հետաքրքրող երեք թեմայի շուրջ:

Առաջ անցնելով փաստենք՝ Ազատ Գասպարյանի գլխավորած ընկերության գործերին ամեն անգամ ծանոթանալուց հետո անհնար է լավատեսությամբ չլցվել...

– Պարոն Գասպարյան, ավարտվում է 2025 թվականը, կուզեինք լսել Ձեր ընկերության տարեկան աշխատանքների ամփոփմանն առնչվող խոսքը:

– 2025 թ. մեզ համար եղել է ամենաբեղմնավոր տարիներից մեկը, որի ընթացքում կատարեցինք բազմածավալ աշխատանքներ և՛ ծավալային, և՛ քանակական առումներով:

Կնգտեմ հիմնականը ներկայացնել:

Նախ՝ իրականացրել ենք Մ-2 միջպետական ճանապարհի 2 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքներ, ավարտել ենք Մեղրի-Ծավ-Կապան ճանապարհի՝ Հ-63-ի՝ Շվանիձորից Ծավի լեռնանցք ընկած 21,8 կմ ճանապարհահատվածի նորոգումը (միջին նորոգում), ընթացքի մեջ են երկրի պաշտպանական համակարգի ամրապնդմանը միտված աշխատանքները, օրերս կավարտենք Մեղրի քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցի տանող ճանապարհի նորոգումը: Լեհվազ գյուղի և Ագարակ քաղաքի մանկապարտեզների բակային նորոգումն ավարտին հասցրեցինք՝ հենապատերով և այլ օժանդակ կառույցներով: Ավարտելու ենք Լեհվազի օրվա կարգավորիչ ջրամբարի կառուցումը, Մեղրի համայնքի Լիճք գյուղում գտնվող մաքրման կայանի շինարարությունը: Սուբվենցիոն ծրագրով Ագարակի յոթ փողոցի վերակառուցման և վերանորոգման աշխատանքները կավարտենք 2026 թվականի ընթացքում: Այդտեղ՝ կոյուղագծերի հետ կապված աշխատանքների պատճառով, նախատեսված ժամկետը երկարաձգվեց: Ագարակի զորամասի համար լրացուցիչ կառուցումներ ենք անում, որը նույնպես կավարտենք 2026 թվականին:

Հյուսիս-հարավ ճանապարհի կառուցմանը մասնակցություն ունենք, որ շատ ծանր և պատասխանատու առաքելություն է:

Ամենակարևորը՝ լեռնանցքներով անցնող ճանապարհների ձմեռային պահպանությամբ

Շարունակությունը՝ էջ 9

Նոր գոբելեն Սյունիքի մերժվածների սալոնում

Ազգային ժողովի 2026 թ. ընտրություններից առաջ, ինչպես հայտնի է, իշխող քաղաքական ուժը՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, նախընտրական ցուցակ ձևավորելու գործընթաց է սկսել որոշ ժամանակ առաջ...

Նախընտրական ցուցակում ընդգրկվելու համար մեկ տասնյակից ավելի մարդիկ էին Սյունիքից հայտ ներկայացրել կամ ինքնաառաջադրվել՝ համապատասխան վճարումներ կատարելով:

Հիմա վաղ է ասել, թե, ի վերջո, Սյունիքից ովքեր կընդգրկվեն ՔՊ-ի նախընտրական ցուցակում: Սակայն, ըստ մարզպետարանի մերը մարզի կրթության ոլորտում և հատկապես հանրակրթության բնագավառում, բայց...

Մերժվել է մարզպետարանի գլխավոր քարտուղար, հին տոմարով՝ աշխատակազմի ղեկավար Էդգար Մարտիրոսյանը:

Համեմատաբար գրագետ այդ պարոնն օրական 24 ժամ գործող մարզպետին անձնական նվիրվածության ներկայացումներ էր բեմադրում՝ դեռևս նախորդ մարզպետի օրերից, երբ Ռ. Ղուկասյանը Սյունիքի հարցերով իբր զբաղվող, բայց գոյություն չունեցող աշխատանքային խմբի ղեկավարն էր:

Եվ գլխապտույտն այնքան սաստիկ էր գլխավոր քարտուղարի մոտ, որ չի էլ նկատել, թե ինչպես է Սյունիքի մարզպետարան

Անկեղծ ասած՝ մեզ չի էլ զարմացնում վերոնշյալ վեց չինովնիկին մերժելու փաստը: Ուրիշ հանգամանք է զարմանքի տեղիք տալիս՝ մեր պատմության ամենաբարդ շրջանում Սյունիքի մարզպետարանը հիմնովին վարկաբեկած, պարապության լաբիրինթոսում մխրճված, Սյունիքի հետ (իրենց նկարագրով ու գործով) որևէ աղերս չունեցող, սյունիքյան որևէ հարցում սեփական կարծիք չունեցող այդ անձինք գնում էին խորհրդարան՝ որ ի՞նչ անեն...

Էդգար Մարտիրոսյան

Հայկ Հարությունյան

Կարեն Բալյան

Նարե Ղազարյան

Նվարդ Հարությունյան

Սուրեն Քեսեջյան

աղբյուրների, արդեն իսկ հայտնի է առաջին մերժվածների փունջը...

Այդ տեղեկատվության համաձայն՝ Նարե Ղազարյանը, ով Սյունիքի օրվա մարզպետի տեղակալն է, մերժվել է ձայների ճնշող մեծամասնությամբ: Պարզվում է՝ ՔՊ-ի վերնախավում տեղյակ են, թե որ արժանիքների համար և ինչ առաքելությամբ է մարզպետը նրանից՝ մեծ ջանքերի գնով, տեղակալ հորինել:

Տեղյակ են նաև՝ ինչ եռանդով էր տիկինը ժամանակին Կապանի փողոցներում հարայ տալիս՝ «Նիկոլ, դավաճան»:

Մերժվել է մարզպետի մյուս տեղակալը՝ Հայկը՝ Հարությունյան ազգանունով:

Հանրապետականից ՔՊ-ի շարքերը ներխուժած տղային թվում էր, թե աննկատ են իր և զորացրված պչրուհու խարդավանքները մարզի կրթության ոլորտում և հատկապես հանրակրթության բնագավառում, բայց...

Մերժվել է մարզպետարանի գլխավոր քարտուղար, հին տոմարով՝ աշխատակազմի ղեկավար Էդգար Մարտիրոսյանը:

Համեմատաբար գրագետ այդ պարոնն օրական 24 ժամ գործող մարզպետին անձնական նվիրվածության ներկայացումներ էր բեմադրում՝ դեռևս նախորդ մարզպետի օրերից, երբ Ռ. Ղուկասյանը Սյունիքի հարցերով իբր զբաղվող, բայց գոյություն չունեցող աշխատանքային խմբի ղեկավարն էր:

Եվ գլխապտույտն այնքան սաստիկ էր գլխավոր քարտուղարի մոտ, որ չի էլ նկատել, թե ինչպես է Սյունիքի մարզպետարան ասվածը Սյունիքից օտարվում:

Մերժվել է մարզպետի խորհրդական Կարեն Բալյանը: Ավելին, այդ տղային, իբրև Ամանորի նվեր, աշխատանքից հեռացվելու հրաման են պարգևել: Եվ այդ նվերը հանձնելու համար նույնիսկ արձակուրդից հետ են կանչել:

Մերժվել են մարզպետի խորհրդականներ Նվարդ Հարությունյանը և Սուրեն Քեսեջյանը:

Անկեղծ ասած՝ մեզ չի էլ զարմացնում վերոնշյալ վեց չինովնիկին մերժելու փաստը: Ուրիշ հանգամանք է զարմանքի տեղիք տալիս՝ մեր պատմության ամենաբարդ շրջանում Սյունիքի մարզպետարանը հիմնովին վարկաբեկած, պարապության լաբիրինթոսում մխրճված, Սյունիքի հետ (իրենց նկարագրով ու գործով) որևէ աղերս չունեցող, սյունիքյան որևէ հարցում սեփական կարծիք չունեցող այդ անձինք գնում էին խորհրդարան՝ որ ի՞նչ անեն...

Մի կարևոր դիտարկում էլ. մարզպետի երկու տեղակալին, մարզպետարանի գլխավոր քարտուղարին, մարզպետի երեք խորհրդականին իշխող քաղաքական ուժը, փաստորեն, անվստահություն է հայտնում, բայց մարզպետը (գլուխը կախ անելու և իր ձիերի մոտ փախչելու փոխարեն) ինչ-որ աննախադեպ «հաջողությունների» մասին է բարբաջում՝ չիմանալու տալով, որ Սյունիքում և ընդհանրապես բնության մեջ աննախադեպը հենց ինքն է, չպատասխանելով առտնին հարցին, թե ի՞նչ կապ ունի ինքը Սյունիքում կատարված աշխատանքների հետ, սյունեցիների՝ դարերի խորքից եկող ավանդական համերաշխության հետ:

Թեմայի շուրջ խոսակցությունը չենք ավարտում, կշարունակենք, երբ վերջնականապես հայտնի կդառնա, թե Սյունիքից ովքեր են ընդգրկվել ՔՊ-ի նախընտրական ցուցակում:

Մասնավորապես՝ անհրաժեշտություն կլինի, որ առաջադրված յուրաքանչյուր ոք հանգամանալից հաշվետվություն տա, թե մեր երկրամասի համար բախտորոշ վերջին տարիներին և ներկա փուլում կոնկրետ ի՞նչ գործերով են զբաղվել ու զբաղվում: Խոսքը նախ և առաջ վերաբերում է ներկայումս մարզում պաշտոնավարող ու 2021-ին պատգամավորի մանդատ ստացած անձանց:

07.01.2026

2026-ի առաջին զորակոչը Գորիսում. բարի ծառայություն մեր տղաներին

Սկիզբը՝ էջ 1

Գեներալ-մայոր Արմեն Գյոզալյան.

– Սիրելի նորակոչիկներ, այս պահից դուք դառնում եք հայոց բանակի զինվորներ: Բանակի, որը մեր ժողովրդի անվտանգության, խաղաղ կյանքի և ապագայի գլխավոր երաշխիքն է: Ձեր ուսերին է դրվում մեծ վստահություն ու պատիվ՝ պաշտպանել հայրենի հողը, ձեր ընտանիքները, մեր ժողովրդին: Բանակում դուք կսովորեք կարգապահություն, ընկերասիրություն, փոխօգնություն, պատասխանատվություն: Այստեղ դուք կկոփվեք ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես: Դուք կսովորեք ցանկացած իրավիճակում հաղթահարել դժվարությունները, կլինեք ամուր և վստահ: Հիշեք՝ զինվորը միայն զենք կրող չէ, զինվորը նախ հայրենիքի արժանապատիվ զավակն է, ով իր վարքով, խոսքով ու քայլերով ներկայացնում է իր հերոսական ժողովրդին: Եղեք կարգապահ, հարգեք ձեր հրամանատարներին, աջակցեք ձեր ծառայակիցներին: Միասնականությունը հզոր ուժ է, միշտ հիշեք ու առաջնորդվեք այդ գիտակցումով:

Սիրելի ծնողներ, ձեր զավակները հուսալի ձեռքերում են: Մենք ամեն ինչ կանենք, որ նրանք ծառայեն արժանապատվորեն, անվտանգ և պատվով վերադառնան հարազատ օջախներ: Սիրելի զինակոչիկներ, ծառայեք հավատով, պատասխանատվությամբ և հպարտությամբ: Թող ձեր ծառայությունը լինի խաղաղ, իսկ վերադարձը՝ պատվով:

Կեցցե հայոց բանակը, կեցցե Հայաստանի Հանրապետությունը:

Սյունիքի զինվորական կոմիսարիատի զորահավաքային բաժնի պետ, զինվորական կոմիսարի տեղակալ, գնդապետ Մանուել Մարտիրոսյան.

– Սիրելի նորակոչիկներ, այսօր դուք արժանանում եք հայրենիքի պաշտպանի ամենաբարձր պատվին՝ հայոց փառապանծ բանակի զինվորի կոչմանը: Կյանքի կարևոր մի շրջան, որտեղ զինվորական ծառայության մեկուկես տարվա ընթացքում ձեր կյանքի պատմական ուղին կկերտեք պատասխանատվության բարձր զգացումով ու հաստատուն գիտակցությամբ, որ հարազատ մոր պես անգին ու միակն է հայրենիքը:

Պատվով կրեք հայկական բանակի համազգեստը: Եղեք միաբան, քանզի միասնական ենք առավել ուժեղ ու անպարտելի: Իրար հանդեպ եղբոր պես ներող ու հանդուրժող, սրտացավ ու նվիրված եղեք, ծառայեք մեկմեկու թիկունք դարձած: Միշտ հիշեք, ամեն դժվարություն էլ հաղթահարելի է: Ամենակարևորը՝ տանը սպասում են ձեզ:

Կաղվա բացվող լուսաբացը, մեր նոր օրվա սկիզբը դուք եք:

Սիրելի ծնողներ, խնդրում եմ, որ ձեր որդիներին ճանապարհեք բանակ ոչ թե արցունքով, այլ ժպիտով և հպարտությամբ, քանի որ նա է ձեր խաղաղ կյանքի պատասխանատուն:

Սիրելի զինակոչիկներ, մաղթում եմ ձեզ խաղաղ և անփորձանք ծառայություն ու բարի վերադարձ:

Զորամասի սերժանտական խորհրդի նախագահ, սերժանտ Վելիխան Ստեփանյան.

– Կրկին անգամ հայոց բանակի շարքերը համալրվում են հայ քաջազուններով, ովքեր գիտակցաբար գալիս են մեզ փոխարինելու: Բանակային կյանքի դժվարությունների հետ մեկտեղ, մեր ծառայությունը քաղցր է և օգտակար, քանի որ մենք իբրև պատանի, գալիս ենք հայոց բանակ և իբրև տղամարդ վերադառնում հայրենի օջախներ: Մեր ծառայության ժամանակը հասել է ավարտին և հիմա ձեր հերթն է՝ նոր ուժով, նոր եռանդով հայրենիքի սահմանները պաշտպանելու:

Միջոցառման ընթացքում զինվորական նվագախումբը կատարեց ՀՀ և հայոց բանակի օրհներգերը, զինվորական քայլերգեր:

Միջոցառման բարձր մակարդակով անցկացմանը նպաստեց Գորիսի Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնը:

Հարազատների հետ հրաժեշտից հետո նորակոչիկները բարձր տրամադրությամբ մեկնեցին բանակ:

ՎԱՀԵ ՄԿՐՏՉՅԱՆ
08.01.2026

Ամանորի շեմին՝ 15 նոր փոխադրամիջոց Կապանի երթուղային ցանցին. հարգանք համայնքապետ Գևորգ Փարսյանին

Նոր տարվանից Կապանի երթուղիները սպասարկում են նոր փոխադրամիջոցներ: 2026թ. հունվարի 1-ի առավոտյան ժամը 7-ից Կապան համայնքի երթուղիներ դուրս են եկել չինական արտադրության վեց ավտոբուս և ռուսական արտադրության ինը միկրոավտոբուս: Տրանսպորտային միջոցները ձեռք են բերվել համայնքային բյուջեից հատկացված 560 մլն դրամով:

Դեկտեմբերի 28-ին նոր տրանսպորտային փոխադրամիջոցները Գարեգին Նժդեհ հրապարակում ներկայացվեցին հանրությանը և լրագրողներին:

Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը հայտնեց, որ ստեղծվել է քաղաքի երթուղիների սպասարկման նոր ծառայություն՝ «Կապան համայնքի տրանսպորտի ծառայություն» ՀՈԱԿ-ը (տնօրեն՝ Մեսրոպ Արզումանյան): Հայտնեց նաև, որ ուղեվարձը մնում է նախկինը՝ 100 դրամ: Վարորդի մոտ տեղադրված սարքն ընդունում է 50, 100, 200 դրամանոց մետաղադրամներ: Վերջինս կիրառվում է այն դեպքում, երբ վճարվում է երկու հոգու համար: Հարմարանքը մանրը չի վերադարձնում: Կարելի է ուղեվարձը վճարել և՛ կանխիկ, և՛ քարտով:

Նոր տրանսպորտային միջոցներից հեշտությամբ կօգտվեն հաշմանդամները՝ հատուկ հարմարանքի միջոցով:

Առանձնապես ոգևորված էին վարորդները, որոնց տրվել է նոր հագուստ: Նրանցից Գագիկ Հովհաննիսյանը քառասուն և ավելի տարվա վարորդական ստաժ ունի, իր ձևակերպմամբ՝ վարորդ է ծնվել, վերջին տասը տարում ավտոբուս է վարել: Ասում է՝ ձգտելու են ուղևորների հանդեպ առավել բարյացակամ լինել, վերջիններիս էլ հորդորում է չփչացնել ավտոբուսի սրահը, նստարանները: Գագիկը սպասարկում է թիվ 8 երթուղին, որ Շինարարների թաղամաս է տանում:

Ի դեպ, քաղաքում վերանորոգվել է ճաշակով ձևավորված չորս կանգառ, որտեղ տեղադրվել է արևից և անձրևից պաշտպանվելու ծածկ: Այս գործին աջակցել է համայնքապետարանի գործընկեր Կապանի լեռնահարստացման կոմբինատը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
29.12.2025

ՌԴ-ն չի կարող հեռանալ Հարավային Կովկասից. Կոպիրկինը՝ հայ–ռուսական հարաբերությունների մասին

Ռուսաստանցի դիվանագետի խոսքով՝ կարևոր է պահել հիմնարար բարոյական սկզբունքները և աճող աշխարհաքաղաքական լարվածության և դիմակայության պայմաններում պահպանել մարդկային հարաբերությունները: Պետք է հիշել պատմության դասերը և խուսափել անցյալի սխալները կրկնելուց:

Չնայած բարդ փուլին և արտաքին ներգործությանը՝ հայ-ռուսական հարաբերությունները պահպանում են իրենց էությունը: Այս մասին Sputnik Արմենիա ռադիոկայանի «Աբովյան TIME» հաղորդաշարի եթերում ասաց Հայաստանում Ռուսաստանի դեսպան Սերգեյ Կոպիրկինը՝ ամփոփելով 2025 թվականը՝ Մոսկվայի և Երևանի հարաբերությունների համատեքստում:

«Մեր հարաբերություններում բարդ փուլ է: Դրանք չեն կարող մեկուսացված լինել տարածաշրջանային և համաշխարհային գործընթացներից, և մենք զգում ենք այդ ներգործությունը: Կարևոր է, որ պահպանվի այն առանցքայինը, որը մեր հարաբերությունների հիմքն է: Կցանկանայի ակնկալել, որ չնայած բոլոր խնդիրներին ու դժվարություններին՝ մենք կպաշտպանենք այդ հարաբերություններն արտաքին գործոնների անբարենպաստ ներգործությունից: Ամբողջ տարվա ընթացքում երկու կողմից էլ քաղաքական կամք է դրսևորվել հարաբերությունները պահպանելու համար», – նշել է դիվանագետը:

Նա նաև հավելեց, որ այդ հարաբերությունների երկուստեք կարևորության ըմբռնման մասին է վկայում քաղաքական երկխոսության բավական ակտիվ դինամիկան. տարվա ընթացքում եղել են փոխադարձ այցեր, բարձր մակարդակի շփումներ: Մասնավորապես, փոխայցելություններ են իրականացրել Ռուսաստանի և Հայաստանի արտգործնախարարները, Երևանում է եղել ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն, օրերս Հայաստանի վարչապետը եղել է Սանկտ Պետերբուրգում, որտեղ տեղի են ունեցել ԵԱՏՄ և ԱՊՀ ձևաչափերով հանդիպումներ, կայացել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի և Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի երկկողմ հանդիպումը:

Սերգեյ Կոպիրկինն ընդգծեց՝ ռուսաստանյան կողմը միշտ հստակ հայտարարել է, որ Մոսկվան Հայաստանը դիտարկել և դիտարկում է որպես դաշնակից երկիր, իսկ հայերին՝ որպես եղբայրական ժողովուրդ:

Ինչ վերաբերում է Ռուսաստան-Հայաստան ապրանքաշրջանառության գրեթե 50 տոկոսով նվազմանը (ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկի խոսքով՝ Ռուսաստանի և Հայաստանի փոխադարձ առևտուրը 2025 թվականին կարող է կազմել 6 մլրդ դոլարից մի փոքր ավելի, ինչը 2024 թվականի համեմատ կրկնակի քիչ է), ապա, դեսպանի կարծիքով, դա մտահոգության տեղիք չի տալիս, քանի որ 2024 թվականին հակառուսական պատժամիջոցների պատճառով վերաարտահանման հաշվին վիճակագրությունը կտրուկ աճել է (2021 թվականին ՌԴ - ՀՀ ապրանքաշրջանառությունը կազմում էր մոտ 2.5 մլրդ դոլար, իսկ ռազմական հատուկ գործողությունը սկսվելուց ի վեր այն գրեթե ամեն տարի կրկնապատկվում էր-խմբ.):

Կոպիրկինի խոսքով՝ չնայած երկրների միջև ապրանքաշրջանառության նվազմանը, այնուամենայնիվ, այն ունի բարձր դինամիկա (Հայաստանի առևտրի 35%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին):

«Ըստ վիճակագրության՝ ապրանքաշրջանառության ծավալների էական նվազում կա: Բայց փորձագետներն ասում են, որ խուճապի կարիք չկա, իհարկե ուշադրություն դարձնել պետք է, բայց մտահոգվելու կարիք չկա, քանի որ զգալի չափով նվազումը տեղի է ունեցել իրավիճակային այն գործոնների հաշվին, որոնք նախորդ տարիներին ապրանքաշրջանառության աճ են բերել: Եվ որ շատ կարևոր է, գործարար շրջանակները շահագրգռված են այդ հարաբերությունների զարգացմամբ»,– հայտարարել է դեսպանը:

Ընդհանուր առմամբ, Կոպիրկինի խոսքով, Մոսկվա-Երևան հարաբերություններն անցնում են հասունացման և վերափոխման փուլ:

Ռուսաստանը ֆիզիկապես չի կարող հեռանալ Հարավային Կովկասից և պատրաստ է աջակցել կոմունիկացիոն նախագծերին:

Ինչ վերաբերում է այսպես կոչված «Թրամփի ուղուն» (TRIPP), Մոսկվայի դիրքորոշումը բավական հստակ է: Ամենասկզբից էլ Ռուսաստանը գտնում էր, որ տարածաշրջանի երկրների միջև բոլոր զգայուն հարցերը պետք է ունենան կայուն, երկարաժամկետ կարգավորում: Դա անհրաժեշտ է, որպեսզի Հարավային Կովկասը լիովին կարողանա իրացնել իր տարանցիկ և մնացած ներուժը:

> *«Ըստ վիճակագրության՝ ապրանքաշրջանառության ծավալների էական նվազում կա: Բայց փորձագետներն ասում են, որ խուճապի կարիք չկա, իհարկե ուշադրություն դարձնել պետք է, բայց մտահոգվելու կարիք չկա, քանի որ զգալի չափով նվազումը տեղի է ունեցել իրավիճակային այն գործոնների հաշվին, որոնք նախորդ տարիներին ապրանքաշրջանառության աճ են բերել: Եվ որ շատ կարևոր է, գործարար շրջանակները շահագրգռված են այդ հարաբերությունների զարգացմամբ»*

«Այս ուղղությամբ, այդ թվում՝ տարածաշրջանային կոմունիկացիաների բացման հարցով Ռուսաստանն ակտիվորեն աշխատել է Հայաստանի և Ադրբեջանի հետ», – նշեց Կոպիրկինը:

Նրա խոսքով՝ միանգամայն ակնհայտ է, որ տարածաշրջանում իրավիճակի կարգավորումն ապահովում են եռակողմ ձևաչափով փաստաթղթերը, ինչպես նաև բարձր մակարդակի հայտարարությունները, որոնք ընդունվել են 2020-2022 թվականներին:

«Ռուսաստանի դիրքորոշումը չի փոխվել, և մենք հիմա հստակ հայտարարում ենք, որ պատրաստ ենք աջակցություն ցուցաբերել այն ձևով ու չափով, որը պետք է կողմերին: Մեզ համար շատ կարևոր է, թե ինչ տեղի է ունենում Հարավային Կովկասում»,– «Աբովյան TIME»-ի եթերում ասաց Կոպիրկինը:

Խոսելով 2026 թվականի ծրագրերի մասին՝ դեսպան Կոպիրկինը կարծիք հայտնեց, որ երկու երկրների հարաբերություններում առկա մեխանիզմները կշարունակեն գործել նաև հաջորդ տարի, աշխատանքային ռեժիմով դիվանագիտական խողովակներով կմշակվեն փոխայցելությունները:

«Բնականաբար, մենք մեր մշակութային-հումանիտար հարաբերությունները միշտ դիտարկել և դիտարկում ենք որպես առանցքային բաղադրիչներից մեկը: Տարվա ընթացքում բավական հագեցած օրակարգ ունեինք, որը վերաբերում էր բնակչության բոլոր շերտերին: Մեզ միավորում է մշակութային, հոգևոր ընդհանրությունը, և դա իր արտացոլումն է գտել անցկացվող միջոցառումների, մշակութային և մարդասիրական ոլորտում տեղի ունեցող իրադարձությունների մեջ: Սա մեր հարաբերությունների շատ դրական կողմն է, և կան բավական լուրջ ծրագրեր նաև 2026 թվականի համար»,– ամփոփեց դիվանագետը:

Ավելի վաղ, ելույթ ունենալով ռուսերեն բանավեճերի Հայաստանի միջբուհական առաջին առաջնության մասնակիցների համար, Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը հայտարարել էր, որ հատկապես նորագույն շրջանի պատմությունն այսօր դարձել է լուրջ գաղափարական, քաղաքական և աշխարհաքաղաքական վեճերի առարկա:

26.12.2025

Կապանի Ձորք թաղամասում կյանքի ուղեգիր ստացան գեղաճաշակ մարզադաշտն ու խաղահրապարակը

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների նախօրեին Կապանում տոնական իրադարձությունների յուրօրինակ շքերթ է...

Բնակարանամուտին՝ դեկտեմբերի 27-ին, հաջորդեց Ձորք թաղամասի մարզադաշտի ու խաղահրապարակի բացումը:

Տոնական այդ իրադարձությանը հավաքվել էին թաղամասի հարյուրավոր բնակիչներ...

Իսկ երեխաներ... Ոչ միշտ ենք հանդիպում նման միջոցառման կամ իրադարձության, որ այդքան երեխաներ ներկա գտնվեն: Եկել էին ընդունելու իրենց իսկ համար պատրաստած, երկար սպասված նվերը՝ մարզադաշտն ու խաղահրապարակը...

Թաղամասի թիվ 13 դպրոցի հարևանությամբ կառուցվել է Կապանի ամենամեծ մարզական ենթակառուցվածքը՝ բազմաֆունկցիոնալ խաղադաշտ և մանկական խաղահրապարակ, որտեղ մարզվելու պայմաններ են ստեղծված ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի և մեծ թենիսի սիրահարների համար:

Ծրագիրն իրականացվել է Կապանի համայնքապետարանի և «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերության համաֆինանսավորմամբ:

110 մլն դրամ արժեքով ծրագրի 50 տոկոս համաֆինանսավորումն իրականացրել է Կապանի լեռնահարստացման կոմբինատը:

Խաղադաշտի և խաղահրապարակի բացմանը մասնակցում էին Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը, Կապանի լեռնահարստացման կոմբինատի կառավարման խորհրդի նախագահ Սասուն Ավետիսյանը, կոմբինատի գլխավոր տնօրեն Դավիթ Դանիելյանը, թաղամասի բնակիչներ:

Խաղադաշտի մուտքը երիզող ժապավենը կտրելուց հետո երախտագիտության խոսքով հանդես եկան համատիրության նախագահ Սեդա Ավետիսյանը, թաղամասի բնակիչ Սվետա Շահնազարյանը, ովքեր երախտագիտության ջերմ խոսքեր հղեցին Կապանի համայնքապետարանին և Կապանի ԼՀԿ–ին՝ թաղամասի հանդեպ ցուցաբերած նման ուշադրության համար:

Բացման արարողությանը ելույթ ունեցավ Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը: Ծրագիրը բարեհաջող իրականացնելու համար նա շնորհակալություն հայտնեց «Երվադա» շինարարական կազմակերպությանը, նախագծող «Էլեկշին» և տեխնիկական հսկողությունն իրականացնող «Որակյալ գործ» ընկերություններին:

Գևորգ Փարսյանը նաև շնորհավորեց ներկաներին, թաղամասի բնակիչներին՝ գալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Հանդիսության վերջում մանկական խաղահրապարակում Ձմեռ պապն ու Ձյունանուշը թաղամասի փոքրիկ բնակիչներին տոնական նվերներ հանձնեցին, հնչեցին Նոր տարվան նվիրված երգեր:

110 մլն դրամ արժեքով ծրագրի 50 տոկոս համաֆինանսավորումն իրականացրել է Կապանի լեռնահարստացման կոմբինատը:

Սպասված իրադարձություն Կապանում

Դեկտեմբերի 26-ին Կապանի Շինարարների թաղամասում հաճելի իրադարձություն էր՝ բնակարանամուտի արարողություն:

Քույր ու եղբայր Դիանա և Դավիթ Ալեքսանյանները բնակարան ունեցան: Նրանք ծնողազուրկ են, Դիանան վարսահարդարի, իսկ Դավիթը խոհարարի մասնագիտություն են ստացել Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրում ու բնակվում էին կրթօջախի հանրակացարանում:

Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը մի հանդիպման ժամանակ նրանցից հետաքրքրվել էր, թե ի՞նչ կցանկանային, նրանք պատասխանել էին՝ բնակարան:

Ինչպես հայտնեց «Կապան» հիմնադրամի տնօրեն Անժելա Ալեքսանյանը, բնակարանը գնվել է 17 մլն 550 հազար դրամով, որից 3,5 մլն դրամ հանգանակվել է «Կուրկուտի փառատոնի» ընթացքում, իսկ մնացած մասը նվիրատվություններ են Զանգեզուրի պղնձամոլիբդենային և Կապանի լեռնահարստացման կոմբինատների, «Աժդանակ» ՍՊ ընկերության և այլ կազմակերպությունների կողմից:

Շինարարների թաղամասի թիվ 13 շենքում գտնվող բնակարանը ճաշակով վերանորոգվել է, կահավորվել, իսկ կենցաղային գույքը ձեռք է բերվել Կապան համայնքի ավագանու «Շանթ» դաշինքի միջոցով:

Շնորհավորելով Դիանային և Դավիթին՝ բնակարան ունենալու սպասված իրադարձության առիթով՝ Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը խորհրդանշական համարեց, որ հենց Ամանորի շեմին է տեղի ունենում բնակարանամուտի արարողությունը, որ նոր տարին պիտի դիմավորեն իրենց տանը:

Այնուհետև հնչեցին շնորհավորանքներ և բարեմաղթանքի խոսքեր:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
26.12.2025

Կապանի լեռնահարստացման կոմբինատի նվերը Կապան քաղաքին

Հասարակական տրանսպորտի նոր ցանցի ներդրմանը զուգահեռ Կապանում կանգառները կահավորվել են նաև նոր և ժամանակակից կանգառասրահներով՝ ապահովելով ուղևորների հարմարավետությունը տարբեր եղանակային պայմաններում:

Ժամանակակից դիզայնով, թուջե կանգառասրահները կահավորված են գիշերային լուսավորությամբ, հարմարավետ նստարաններով, ինչպես նաև քաղաքի անցյալը պատկերող լուսանկարներով, որոնք հնարավորություն են տալիս մի քանի վայրկյանով տեղափոխվել հին Կապան և զգալ տվյալ ժամանակաշրջանի շունչը:

Քաղաքային միջավայրի կարևոր բաղադրիչ կազմող 4 կանգառասրահը տեղադրվել է «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերության ֆինանսական միջոցներով՝ շուրջ 26 մլն ՀՀ դրամ ներդրմամբ:

Գործընթացը շարունակական է, և առաջիկայում նոր կանգառասրահներ կտեղադրվեն քաղաքի մի շարք հատվածներում:

ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
07.01.2026

Հերթական խաղադաշտը՝ Շահումյան փողոցում

Ամանորին ընդառաջ՝ հերթական գեղեցիկ և սպասված նվերն է մատուցվել երեխաներին: Դեկտեմբերի 20-ին՝ հանդիսավոր պայմաններում, շահագործման է հանձնվել Շահումյան փողոցի թիվ 15, 17 և 19 բազմաբնակարան բնակելի շենքերի հարևանությամբ ֆուտբոլի և բասկետբոլի խաղադաշտը, որի բացման կարմիր ժապավենը կտրել են բակի երեխաները:

Բազմաֆունկցիոնալ մարզադաշտից զատ, այս խաղահրապարակը ևս ապահովված է մանկական խաղասարքերով, տաղավար-զրուցարանով, արտաքին լուսավորության ցանցով՝ բնակիչների արդյունավետ ժամանցը կազմակերպելու համար:

Համայնքի ղեկավարին ուղղված շնորհակալական խոսքերով են հանդես եկել նաև բնակիչները՝ գնահատելով կատարված աշխատանքները:

Ծրագրի հաջող իրականացման համար համայնքային բյուջեից խաղահրապարակի կառուցման համար հատկացվել է 22 146 000 ՀՀ դրամ (կապալառու՝ «Վիլաշին» ՍՊԸ):

ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հարցազրույց Սյունյաց աշխարհի մերօրյա բանաստեղծ Տիգրան Գրիգորյանի հետ՝ ծննդյան 70-ամյակի կապակցությամբ

Դեկտեմբերի 27-ին լրացավ բանաստեղծ Տիգրան Գրիգորյանի 70-ամյակը: Հոբելյանի առթիվ էլ զրույց ունեցանք նրա հետ:

Այցեքարտ

Տիգրան Գրիգորյան, ծնվել է 1955 թ. դեկտեմբերի 27-ին Երեւան քաղաքում: Հետագայում ծնողները տեղափոխվել են Գորիս, որտեղ նա 1962-63 ուստարում ընդունվել եւ 1971-72 ուստարում ավարտել է Գորիսի № 2 միջնակարգ դպրոցը: 1972 թ. ընդունվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի ֆիզիկայի բաժինը եւ ավարտել 1976 թվականին՝ ստանալով միջնակարգ դպրոցի ուսուցչի որակավորում:

1974-76 թվականներին Տիգրան Գրիգորյանը համակուրսեցի արցախցի ընկերոջ՝ Առնո Մկրտչյանի հետ ղեկավարել է Գորիսում գործող ընդհատակյա ազգային գաղտնի կազմակերպությունը, որը խորհրդային ռեժիմի պայմաններում աննախադեպ ազգային գործունեություն էր ծավալել:

1976 թ. հոկտեմբերին կազմակերպությունը ՊԱԿ-ի կողմից բացահայտվել է: Նա Առնո Մկրտչյանի հետ ձերբակալվել է: Բարեբախտաբար որոշ ժամանակ անց երկուսն էլ ազատ են արձակվել:

Բարձրագույն կրթությամբ ձեռք բերած մասնագիտությամբ Տիգրան Գրիգորյանն աշխատել է շատ քիչ ժամանակահատված՝ 1976-77 ուստարում մի քանի ամիս դասավանդել է ֆիզիկա եւ մաթեմատիկա Վարդենիսի շրջանի Լճավան գյուղի միջնակարգ դպրոցում: Այնուհետեւ ստանալով օդերևութաբանի կրթություն՝ մինչեւ 1988 թվականն աշխատել է Գորիսի օդանավակայանում՝ ավագ օդերեւութաբան:

1988 թվականին Տիգրան Գրիգորյանը ղեկավարել է Ղարաբաղյան շարժման փետրվարյան ցույցերն ու միտինգները Գորիսում եւ մեծ հիասթափությամբ հասարակական պասիվ կեցվածք ընդունել այն պահից սկսած, երբ այդ շարժման գլուխ է անցել ՀՀՇ-ն:

Խորհրդային Միության փլուզման վերջին տարիներին զբաղվել է գործարարությամբ:

1975 թվականից սկսած Տիգրան Գրիգորյանը բազմաթիվ անգամ նվաճել է շախմատի Գորիսի չեմպիոնի կոչումը: 1975-78 թվականներին մասնակցել է Խորհրդային Հայաստանի հանրապետական շախմատային մրցաշարերին եւ լրացրել վարպետության թեկնածուի նորմա:

Գորիսի շախմատի դպրոցի հիմնադրման օրից (2000 թ.)՝ մինչև այն Գորիսի մանկապատանեկան մարզադպրոցի կազմի մեջ ընդգրկելը (2021 թ.)՝ զբաղեցրել է դպրոցի տնօրենի պաշտոնը:

Ինստիտուտն ավարտելուց հետո գրական-ստեղծագործական գործունեությունը եղել է Տիգրան Գրիգորյանի կյանքի ամենանվիրական զբաղմունքը. գրել է բանաստեղծություններ, պոեմներ, հոդվածներ, մշակել է Գրիշա Մանուչարյանի «Զանգեզուրյան լեգենդներ» շարքը, հայերեն է թարգմանել ռուս բանաստեղծներ Ս. Եսենինի, Վ. Բրյուսովի, Ա. Բլոկի, Ա. Ախմատովայի, Մ. Ցվետաևայի, Ն. Ռուբցովի, Ի. Բրոդսկու և այլ ռուս հեղինակների որոշ ստեղծագործություններ:

2007 թ. լույս է տեսել «Հավիտենության ճանապարհին» վերնագրով Տիգրան Գրիգորյանի ստեղծագործությունների եւ թարգմանությունների ժողովածուն:

2010 թ. առանձին գրքույկով հրատարակվել է նրա «Անմահության համանվագ» պոեմն իր ավարտուն եւ ամբողջական տեսքով: Նույն թվականին Տիգրան Գրիգորյանի հիմնավոր մշակումներով եւ առաջաբանով լույս է տեսել նաեւ Գրիշա Մանուչարյանի «Զանգեզուրյան լեգենդներ» շարքը:

2015 թ. հրատարակվել է Տիգրան Գրիգորյանի «Անմահության համանվագ» ժողովածուն, որում ընդգրկվել էին նրա բանաստեղծությունները, պոեմները, լեգենդների մշակումները, արձակ ստեղծագործությունները, գրական անդրադարձներն ու գրական դիմանկարները:

2024 թ. վերահրատարակվել է 2015 թ. լույս տեսած «Անմահության համանվագ» ժողովածուն՝ որոշակի լրացումներով, որում ընդգրկվել է նաև նրա հարցազրույցներից մեկը:

2012 թ. փետրվարից Հայաստանի գրողների միության անդամ է:

– Պարոն Գրիգորյան, հարգելի Տիգրան, «Սյունյաց երկիր» թերթի և «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի խմբագրակազմի, ինչպես և այդ պարբերականների ընթերցողների ու հետևորդների ջերմ, սրտաբուխ շնորհավորանքն եմ փոխանցում Ձեզ՝ ծննդյան 70-ամյակի կապակցությամբ, մաղթում քաջառողջություն, նաև ստեղծագործական նորանոր հաջողություններ:

– Անչափ շնորհակալ եմ:

– Նախ՝ ի՞նչ զգացողությամբ եք դիմավորում Ձեր հոբելյանը...

– Աննկարագրելիորեն տխուր եմ դիմավորում: Եթե շատ անկեղծ լինեմ՝ պիտի ասեմ, որ կցանկանայի իմ մահկանացուն կնքած լինեի գոնե մինչև 2023 թվականի սեպտեմբերը, որ ոչ միայն չտեսնեի Արցախի հայաթափումն ու իր դարավոր թշնամիների առջև Հայաստանի նվաստացած վիճակը, այլ նաև չդառնայի մեր ժողովրդի ազգային ու հոգևոր անկման այսօրվա ողբալի իրականության ականատեսը:

– Մենք սույն հարցազրույցին կից ներկայացնում ենք Ձեր կենսագրությունը: Եվ, այդուհանդերձ, տարիների հեռվից անցած ուղու ո՞ր դրվագներն են հոբելյանական այս առիթով Ձեր հիշողության մեջ նախ և առաջ արթնանում:

– Կարծում եմ՝ հարցն իմ ստեղծագործական անցած ուղու այն դրվագների հիշատակմանն է վերաբերում, որոնք ժամանակին ինքնաբավության զգացումով են պարուրել իմ էությունը և ինքնավստահություն ներարկել իմ ստեղծագործական ընթացքին:

Հիշողությանս մեջ դրոշմված նման պահերից առաջինը «Ինչպես գտա ինձ» ստեղծագործության երկնվելու դրվագն էր, որի լույս աշխարհ գալուց հետո հավատացի, որ բանաստեղծ եմ:

Երկրորդ հիշարժան դրվագը «Ապխտածություն» պոեմիս, կարելի է ասել, հրաբխային երկունքն էր, որը հեռավոր 1980 թ. գրվեց ընդամենը մի քանի ժամվա ընթացքում: Հարկ եմ համարում ասվածին նաև ավելացնել, որ իմ կյանքի անելանելի պահերին այդ ստեղծագործության վերընթերցումը հպարտության զգացումով պարուրելով ինձ՝ ամեն ինչ հաղթահարելու կորով է ներարկել իմ էությանը:

Հաջորդ դրվագը՝ «Ճահճատենդ» բանաստեղծությանս երկունքն էր, որը թղթին հանձնելուց հետո երեք տարի պարբերաբար այն վերընթերցում էի ու ոչ մի տող գրելու ցանկություն չէր արթնանում իմ ներսում, քանի որ համարում էի, որ այդ ստեղծագործության մեջ այս կյանք կոչվածի մասին իմ ողջ ասելիքն ամփոփված է:

Հաջորդ անմոռանալի դրվագն այն պահն էր, երբ քառասնօրյա ոգեղեն տվայտանքներից հետո կարողացա ավարտել Եսենինի «Սև մարդը» պոեմի թարգմանությունն այնպիսի մակարդակով, որ ինձ, որպես ընթերցողի, այսօր էլ երբեմն թվում է, թե Եսենինն այդ պոեմը հայերեն է գրել:

Եվ հիշողությանս մեջ դաջված հինգերորդ անմոռանալի դրվագը՝ ստեղծագործական ինքնաբավության հիացքի ու հրճվանքի մեջ հայտնված իմ այն աննկարագրելի հոգեվիճակն էր, երբ ստեղծագործական չափորոշիչներիս լիովին հավատարիմ մնալով՝ կարողացա ավարտին հասցնել իմ «Անմահության համանվագ» պոեմը:

– Երջանկահիշատակ Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցին Ձեզ այսպես էր դիմում՝ «Ա՛յր քանքարափայլ»: Այնուհետև ավելացնում էր՝ «Քո՝ պոետիդ սիրահարվածության մեջ վաղնջական, նորօրյա և ապառնական ժամանակի ամեն մի չպեղված սյունեցին է..»:

Կուզենայինք քանքարափայլ Տիգրան Գրիգորյանի ստեղծագործական ուղուն ծանոթանալ:

– Ես ցանկանում եմ այս առիթն օգտագործելով՝ նախ անդրադառնալ Ռոբերտ Էջանանցու հիշատակին ու Լաս մեկ անգամ հայտարարել, որ նա բացառիկ անհատականություն էր. նա այն ոգեղեն անձնավորություններից էր, ովքեր ժողովուրդներին ազգ դարձնող մարդկային դասին են պատկանում:

Անցնելով հարցիդ պատասխանին՝ պիտի խոստովանեմ, որ եթե իմ կենսագրականից առանձնացնեմ ստեղծագործական ուղիս, ապա պիտի փաստեմ, որ ապրածս տարիների ֆոնին՝ ժամանակահատ-

Վածային առումով այն բավականին քիչ ժամանակաշրջան է ընդգրկում: Դրա պատճառներին իմ խոսքի մեջ կամա թե ակամա անդրադարձ կլինի:

Իմ առաջին ստեղծագործությունը, որին, առանց վերապահումների, բանաստեղծություն կարելի էր կոչել՝ գրել եմ 24 տարեկանում՝ 1979 թ.: Իհարկե, մինչ այդ էլ ստեղծագործական բանավոր մտմտանքներ ունեցել էի: Այդ բանաստեղծությունը գրելուց հետո միանգամից մտա ստեղծագործական հուն և բավականաչափ գործեր արարեցի: Այդ շրջանը ձգվեց մինչև 1982 թ.:

Մինչև 1988 թ. հիմնականում զբաղված էի համաշխարհային գրականության դասական հեղինակների թողած գրական ժառանգության ընթերցանությամբ՝ նպատակ ունենալով ընթերցանության պակասս լրացնելուց հետո միայն նորից զբաղվել ստեղծագործական գործունեությամբ: Առանց չափազանցության, կարելի ասել, այդ տարիներին զուգահեռաբար զբաղված էի նաև պատանեկան տարիների ընկերներիս պատմվածքներն ընթերցելու, մշակելու կամ վերաշարադրելու ու նրանց «գրող դարձնելու» գործով: Դա անելու հարցում ինձ պարտավորված էի զգում, քանի որ իմ ստեղծագործությունների ոգևորվածության ալիքն էր մղել նրանց գրիչ վերցնելու:

1988 թ. սկսվեց Ղարաբաղյան շարժումը. այն համաժողովրդական շարժման վերածելու առաջին շրջանի ծանրությունն ակամայից Գորիսում ես իմ ուսերին առա:

1989-1992 թթ. ստիպված էի բիզնեսով զբաղվել, որովհետև առողջական խնդիրներ ունեի և պարբերաբար Մոսկվայի 1-ին հիվանդանոցում ստացիոնար բուժումներ ստանալու համար գումար էր պահանջվում:

Արժանապատվություն հասկացության ամենաանվիճարկելի մեկնությունն իմ ընկալմամբ՝ ռուս գրող Իվան Գոնչարովի գրչին է պատկանում: Այն այսպիսի խորախորհուրդ ձևակերպմամբ է հնչում. «Արժանապատվությունը կյանքի համն է»:

Մի խոսքով՝ բուժմանս համար պահանջվող գումարները որոշեցի ինքս հայթայթել: Քանի որ հայկական իրականության մեջ, եթե ինչ-որ մեկը որևէ մեկին օգնության ձեռք է մեկնում՝ մեկ է՝ վաղ թե ուշ՝ օրերից մի օր, այդ բարեգործության փաստն օգնության կարիք ունեցած անձի երեսով են տալիս: Եթե դա չանի անգամ նրան օգնողը՝ նրա փոխարեն դա հաստատ անելու է վերջինիս ընկերը, բարեկամը, հարևանը, և չի բացառվում, որ դա անի նույնիսկ նրա հարազատը...

1989-2000 թթ. ընկած ժամանակահատվածում գրել եմ ընդամենը երեք բանաստեղծություն. «Անարժեքության հեղձուկի մեջ» (1991 թ.), «Ճահճատենդ» (1993 թ.) և «Խոսք իմ ժողովրդին» (1996թ.) ստեղծագործությունները:

Հաջորդ իմ ստեղծագործական փուլը սկսվել է 2001 թ. և շարունակվել մինչև 2012թ.: Դա երևի թե իմ կյանքի ամենատևական ստեղծագործական փուլն է եղել: Այդ ժամանակահատվածում է նաև երկնվել իմ գլուխգործոցներից մեկը՝ «Անմահության համանվագ» պոեմը:

Իմ ստեղծագործական ուղու 3-րդ փուլ կարելի է համարել 2014-2019 թթ. ընկած ժամանակահատվածը:

Պիտի նաև խոստովանեմ, որ կենսագրությունիցս առանձնացրած, նշածս ստեղծագործական փուլերում էլ չեմ կարողացել լիովին ապրել միայն գրական գործունեությամբ, որովհետև իմ կյանքում հանդիպած ցանկացած իրավիճակի ամբողջ հոգով եմ արձագանքել, եթե անգամ դրանք հպանցիկ իրողություններ են եղել: Մի խոսքով՝ ես իմ կյանքում ամեն ինչի ու ամեն դրվագի մեջ, կարելի է ասել, հոգի եմ դրել:

Գուցե դա է եղել հիմնական պատճառներից մեկը, որ ամբողջ էությամբ միայն գրական կյանքով ապրելն իմ մարդկային տեսակի համար բավարար պայման չի եղել:

Իսկ 2020 թ. Արցախյան պատերազմից հետո՝ արժեհամակարգային անկումներով լեցուն, ամբողջովին դեգրադացված այս իրականության մեջ, մեկ չափածո քառատող անգամ չեմ գրել:

Այսօր հայրենիքիս հետ տեղի ունեցող այս անպարագիծ ողբերգությունն իրականում հայ ժողովուրդ կոչվածի մոլորված մեծամասնության ողբալի մասնակցությամբ է տեղի ունենում: Ու ես ամեն Աստծո օր՝ բազմաթիվ անգամ, ինքնակործանման ընթացք բռնած իմ էթնիկ տեսակի բավականին հսկայական զանգվածի ներկա անտարբեր ու անհոգ կեցվածքից՝ անելանելի հուսահատության գիրկն եմ ընկնում ու եթե փորձեմ այդ հոգեվիճակում բանաստեղծական ասելիք հնչեցնել՝ այն միանշանակ իմ ժողովրդին ուղղված պարսավանքի տարրեր պիտի պարունակի: Կարող եմ պարզապես ասել, որ ազգային կամ հենց սովորական մարդկային ամոթից է, որ բանաստեղծելու համար գրիչ չեմ վերցնում:



Գորիս, համայնապատկեր

Այստեղ ուզում եմ անդրադառնալ ինձ մոտ թե՛ խղճահարություն, թե՛ նողկանք հարուցող մի երևույթի և: Երբեմն ֆեյսբուքյան հարթակում հանդիպում եմ չափածո խոսքերի, որոնց հեղինակները՝ մեր ժողովրդի կողմից իր ազգային ինքնության ոչնչացման ուղին կամավոր բռնած այսօրվա իրականության ֆոնին անգամ, անճարակի ողորմելի քստմնելիությամբ հայ ժողովրդի բախտն են ողբում...

Հունական ասացվածքն ասում է. «Մարդու ճակատագիրը նրա բնավորությունն է»:

Ժողովուրդների պարագայում՝ այդ ասացվածքը ես այս կերպ կհնչեցնեի. «Յուրաքանչյուր ժողովրդի ճակատագիր նրա խառնվածքի արդյունքն է»: Ասել է թե՝ մեզ պատուհասած բոլոր արհավիրքների մեջ համար առաջին ու ամենամեծ մեղավորը հենց ինքը՝ մեր ժողովուրդն է՝ իր հավաքական ամբողջության մեջ...

– Չգիտեմ՝ տեղյա՞կ եք, որ Սյունիքի հանրակրթական մի քանի դպրոցում՝ առանձին վահանակների վրա, հատվածներ են ներկայացված Ձեր լավագույն գործերից մեկից՝ «Անմահության համանվագ» պոեմից:

Շատ հետաքրքիր էր բնութագրել այդ պոեմը ճանաչված գրականագետ Կիմ Աղաբեկյանը, որի տեսակետը, կարծեք, բոլորիս մտածածն ու ընկալածն է ներառում՝ «Բնապատկերներն այնքան կենդանի, այնքան գունագեղ են ու շնչեղ, որ ընթերցողն ակամայից անմիջական հարաբերումի մեջ է մտնում հեղինակի հետ, իրեն զգում համանվագի անդամ, հարազատանում այգուն և այգում եղած մարդկանց, «խենթ» տղաների հետ «ասպատակում» վարունգի ածուները, տատի մեջ տեսնում իր տատին, դառնում նրա «եթիմներից» մեկը»:

Միգուցե հիշե՞ք այն ապրումներն ու զգացումները, որ, ի վերջո, լույս աշխարհ բերեցին հրաշալի այդ ստեղծագործությունը:

– Այդպիսի մի դեպքից տեղեկացված եմ: Տարիներ առաջ ձեր թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանն ինձ հայտնել էր, որ Ռոբերտ Էջանանցին ցուցադրական վահանակների վրա իմ «Անմահության համանվագ» պոեմից հատվածներ է առանձնացրել ու իր դպրոցի ճեմասրահների պատերին փակցրել: Իհարկե, անչափ զգացված էի, որ իմ ստեղծագործությունը նման առանձնահատուկ վերաբերմունքի էր արժանացել:

Ձեր երկրորդ հարցադրմանը, եթե փորձեմ հակիրճ ու հստակ պատասխանել՝ ապա կարող եմ պարզապես հղում անել այդ պոեմի վերջին քառատողին, որում, ըստ իս, կան այն բոլոր զգացումները, որոնք ինձ ոգեշնչել են երկնելու այդ ստեղծագործությունը:

Ահա այդ քառատողը.

Դպրոցական տարիք, արձակուրդներ ամառն...
Խորհրդային կյանքի հավատով լի՜ օրեր...
Աշխարհն արևահամ ցնորքի՛ էր նման...
Ու թվում էր՝ անմա՛հ ապրելու եմ դարեր...

Իսկ եթե ստիպված լինեի ավելի հակիրճ՝ ընդամենը մեկ նախադասությամբ պատասխանել Ձեր հարցին, ապա պարզապես կասեի՝ իմ պատանեկան տարիների երջանիկ անգիտությամբ պարուրված երանելի օրերի կարոտն է երկնել այդ ստեղծագործությունը:

– Թարգմանությունների ոլորտում Ձեր արած-դրածին շատերն են անդրադարձել: Սամվել Ալեքսանյանը, օրինակ, ասում է. «Տիգրան Գրիգորյանի թարգմանությունները, առանց փոքրինչ վարանումի, կարող ենք դասել հայ թարգմանչական արվեստի լավագույն նմուշների շարքին»:

Փորձեք ընդհանրացնել այդ ոլորտում Ձեր կատարածը՝ Եսենին, Ռուբցով...

– Բավականին երիտասարդ տարիքում էի, երբ գերվեցի Սերգեյ Եսենինով:

Եսենինյան պոեզիան, կարելի է ասել՝ առանց բանաստեղծական սեթևեթումների, կարողանում է ընթերցողին փոխանցել անհուն սիրով լցված հեղինակի քնքուշ հոգու տիեզերական թախիծն ու ընթերցողի էությունը պարուրել քնարական պոեզիային հատուկ անմեկնելի եթերայնությամբ: Մի խոսքով՝ սկզբում Սերգեյ Եսենինը, իսկ հետագայում Նիկոլայ Ռուբցովը դարձան ռուսական պոեզիայի իմ ամենասիրելի հեղինակները:

Տարիներ անց՝ բավականին հասուն տարիքում, այդ հեղինակների հանդեպ տածած իմ սիրո մղմամբ ձեռք մեկնեցի նրանց ստեղծագործությունների թարգմանությանը: Եվ այդ ոգեղեն աշխատանքը կարողացա հավուր պատշաճի իրականություն դարձնել:

Ռուսական պոեզիան ներկայացնող հեղինակների քանակն իմ վերջին՝ 2024թ. լույս տեսած «Անմահության համանվագ» ժողովածուի «Թարգմանություններ» բաժնում ավելացավ: Այս անգամ ռուս հեղինակների ստեղծագործություններն իմ կողմից թարգմանելու դիպվածը հետևյալն էր. աշխարհահռչակ դիրիժոր, ջութակահար Վլադիմիր Սպիվակովի 75-րդ հոբելյանական տարեդարձի առիթով՝ 2018 թ. ավարտին հայերեն լեզվով պիտի լույս տեսներ երաժշտագետ, մշակութաբան և գրող Սոլոմոն Վոլկովի հեղինակած «Զրույցներ Սպիվակովի հետ» գիրքը: Հայ ժողովրդի լավագույն բարեկամին ներկայացնող այդ գրքի թարգմանությունը և տպագրությունը նախաձեռնողների խմբի հետ առնչվող, արձակագիր ու գրականագետ Ֆելիքս Բախչինյանի խնդրանքով ես ձեռնամուխ եղա այդ գրքում տեղ գտած չափածո դրվագները ռուսերենից հայերեն թարգմանելու գործին: Չնայած ժամանակը բավականաչափ սուղ էր, ուժերի գերագույն լարմամբ, տասնհինգ օրում ստիպված եղա թարգմանել տասնչորս հեղինակի ստեղծագործություններ, սակայն, այդուհանդերձ, ես կարողացա՝ տարիներ առաջ իմ գրքի՝ «Թարգմանություններ» բաժնի առաջաբանի խոսքի մեջ հնչեցրած, թարգմանություններին վերաբերող հիմնական բանաձևումին հավատարիմ մնալ: Ահա պոեզիայի թարգմանչական գործում ինձ ուղեկցող, հավատարմության երդման պես հնչող իմ այդ խորհրդածությունը. «Անվերապահ ինքնալքումով, ինքնամոռաց հավատով լի թարգմանիչը հեղինակի հետ այնպես պիտի մերվի, որ կարողանա բնագրի արարման ներշնչանքի սարսուռն զգալ. թարգմանված տողը, պատկերը ոչ թե արհեստավարժորեն փոխադրված, այլ հնարավորինս պիտի երկնված լինի: Ի լրումն ասվածի՝ ավելացնեմ, որ նույնիսկ պատվիրված թարգմանությունը ոչ թե պիտի փոխադրվելով ինչ-որ կերպ սարքվի, այլ պիտի թարգմանչի կողմից վերապրվելով՝ վերածնվի»:

Այդ գրքի որոշ ստեղծագործություններ ամբողջությամբ թարգմանեցի, որոշ ստեղծագործություններից էլ միայն այն դրվագները, որոնք ընդգրկված էին այդ ժողովածուում: Թարգմանված ստեղծագործութ-

Հանրային կյանքի բոլոր ոլորտների աննախադեպ դեգրադացիայի հետևանքով հասարակության հիմնական հատվածը խարխափում է կործանարար մոլորությունների մեջ: Այս ազգային ու արժեհամակարգային շարունակական անկման իրականության մեջ ոգեշնչման աղբյուր հանդիսացող ոչ մի դրական կետ չեմ տեսնում, որն ինձ ոգևորելով՝ կարողանար հուսադրել ու վերադարձնել ստեղծագործական տիրույթ:

Յունների հեղինակներն էին ռուսական պոեզիայի երևելիներ Ա. Պուշկինը, Վ. Բրյուսովը, Ա. Բլոկը, Օ. Մանդելշտամը, Ա. Ախմատովան, Մ. Ցվետաևան, Յ. Լևիտանսկին, Ի. Բրոդսկին, Բ. Օկուջավան և այլք: Ուզում եմ այստեղ հիշել և հիշեցնել, որ այդ գրքից կատարած իմ ամբողջական թարգմանությունները նույն 2018 թ. առաջին անգամ տպագրվեցին հենց «Սյունյաց երկիր» թերթում:

Այսօր այդ հեղինակների ստեղծագործություններն արդեն ընդգրկված են 2024 թ. լույս տեսած «Անմահության համանվագ» վերնագրված իմ վերջին ժողովածուի «Թարգմանություններ» բաժնում:

– Վաղուց հետևում եմ Ձեր ստեղծագործական ընթացքին ու հաճախ հանգում այն մտքին, որ ի դեմս Տիգրան Գրիգորյանի՝ գործ ունենք գրականագիտության, գրաքննադատության անդաստանում իր մնայուն ուրթը կանգնեցրած անձնավորության հետ:

Չեմ կարող չհիշել Համո Սահյանի մասին Ձեր խոսքը՝ «Հայ մեծ բանաստեղծի զարմանահրաշ տեսակը»:

Հիշում եմ Հովհ. Թումանյանի մասին Ձեր խոսքը՝ «Ամենայն հայոց հոգեհայրը»...

Մեր գրական աշխարհի քանի-քանի հսկաներ են գրել Թումանյանի մասին, բայց Դուք Ձեր Թումանյանը գտաք ու ներկայացրիք:

Եվ ուրեմն՝ լսենք գրականագետ, գրաքննադատ Տիգրան Գրիգորյանին:

– Որևէ հեղինակի ստեղծագործական աշխարհի մասին ծավալած իմ դատողություններն ու նկատառումները ես պարզապես կանվանեի արժևորման խոսք, որում, իհարկե, առկա են լինում և՛ գրականագիտական, և՛ գրաքննադատական տարրեր: Եվ պիտի ասեմ, որ երևի թե դա իմ մեջ բավականին լավ է ստացվում: Գուցե պատճառն այն է, որ ինչ-որ հեղինակի ստեղծագործական աշխարհի մասին խոսք շարադրելիս նախ և առաջ փորձում եմ վերծանել իմ ենթագիտակցականի վրա տվյալ հեղինակի ստեղծագործական աշխարհի դրոշմած զգացողություններն ու թողած ազդեցությունները, որովհետև եթե անգամ մեր գիտակցությունն է ստեղծագործության հետ հաղորդակցվելու հնարավորություն ստեղծում՝ միևնույն է՝ նրա որակի գնահատականը «տալիս» է մարդկային ենթագիտակցությունը: Ասել է թե՝ մարդու հուզաշխարհը...

Քանի որ իմ հոդվածներից հատկապես Հովհաննես Թումանյանի մասին գրածս խոսքի վրա կանգ առաք՝ կցանկանայի անդրադառնալ այդ խոսքի լույս աշխարհ գալու նախապատմությանը: Այն գրվել է հեռավոր 1989թ.՝ նրա ծննդյան 120-րդ հոբելյանական տարեդարձի առիթով: Թումանյանի մասին ինձ խնդրեց խոսք գրել «Զանգեզուր» թերթի լրագրողուհիներից մեկը, որպեսզի նրա հոբելյանական տարեդարձի օրը՝ հերթական համարում, ներկայացվի իրենց թերթի ընթերցողներին:

Թումանյանի ստեղծագործությունների, ստեղծագործական աշխարհի, քննադատական հոդվածների ու նրա մարդկային նկարագրի մասին գրված բավականին քանակությամբ հոդվածներ ու մենագրություններ էի կարդացել, սակայն, անկեղծ ասած, ոչ մի հեղինակ չէր գրել մի այնպիսի ամփոփ խոսք, որն անդրադարձ կատարած լիներ Թումանյան երևույթի բոլոր որակներին ու իր խոսքի մեջ՝ կարողացած լիներ մեկտեղել դրանք: Ու ես, կարելի է ասել, իմ առջև խնդիր դրեցի, Թումանյան վիթխարի երևույթի բոլոր որակները մեկտեղած, արժևորման խոսք հնչեցնել:

Երբ հոդվածն ավարտեցի ու ներկայացրի հիշյալ լրագրողուհու «դատին», նա կասկածի տակ առավ այդ խոսքի մեջ հնչած նկատառումներիցս մեկն ու ասաց, որ իմ խոսքից

ՃԱՀՃԱՏԵՆԴ

Կյանքը՝ կեղծիքի ճարպիկ սովորույթ:
Ճշմարտությանը... առաջ են տալիս:
Արդարությունը՝ թշվառ ավանդույթ,
Որ հոգեհացի պահին է գալիս:

Սուտ հոլովույթն այս՝ զխտվող ոչինչ է,
Խիղճը դահիճ է, իսկ պատիվը՝ բիճ...
Սերը մոլորված՝ հավատի ճիչ է,
Իսկ համբերությունն՝ ուզվորի մահիճ...

Լրիվ օտար մի խորթ երևույթ եմ...
Ոչ մեկի ցավը չի՞ հասնում սրտիս...
Ի՞նչ ես, Արարիչ, արել իմ գութը...
Մի՞թե կորել է... ցնդել է հոգիս:

Հեռու՛ ինձանից: Այս ի՞նչ արցունք է...
Մի՞թե աճյունս հողին են տալիս...
Կանգ առ, սատանա՛: Հոգիս ինձ հետ է...
Աստղերն էլ անհու՞ն թախծից են լալիս...

Կյանքը՝ կեղծիքի մի կու՞ռ սովորույթ:
Արդարությունը շատ ուշ է գալիս:
Ճշմարտությունը՝ հորած ավանդույթ՝
Հոգեհացին են բուռ-բուռ շաղ տալիս...

այդ հատվածը հանելուց հետո միայն գրածս կներկայացնի թերթի խմբագրին: Ես հրաժարվեցի դա անել՝ հայտարարելով, որ իմ խոսքից մեկ բառ անգամ չեմ հանի ու լքեցի նրա աշխատասենյակը: Մեկ օր անց նա զանգահարեց ինձ և ասաց, որ այդ տեսքով էլ իմ խոսքը կտպագրեն թերթում: Ես հրաժարվեցի իրենց թերթում հոդվածս տպագրելուց՝ հայտարարելով, որ այս խոսքը տպագրելու եմ նրա ծննդյան 150-րդ տարեդարձին՝ «Գրական թերթում» ու կախեցի հեռախոսափողը:

Այս պատմության մարգարեական զավեշտը այն է, որ երեսուն տարի հետո՝ 2019 թ., այդ հոդվածն իսկապես Թումանյանի ծննդյան 150-րդ տարեդարձի առիթով «Գրական թերթում» տպագրվեց: Սակայն պիտի ասեմ նաև, որ մինչ այդ, Թումանյանի ծննդյան 145-րդ տարեդարձին՝ այդ խոսքը տպագրել էր «Սյունյաց երկիր» թերթը:

Թումանյանի մասին գրված գնահատանքի այդ խոսքի մեջ ես կարողացել եմ Թումանյան՝ անընդգրկելի թվացող երևույթին՝ իր անսահմանության ձգտող չափերի մեջ ներկայացնել ու ստեղծագործող սերունդների հերթագայության ֆոնին ցուցադրել նրա իրական մեծության ահռելիությունը:

– Զրուցում ենք Տիգրան Գրիգորյանի հետ... Եվ ինչպե՞ս կարելի է չհիշել նրա մշակումները, հատկապես Գրիշա Մանուչարյանի լեգենդներինը: Որքան լեգենդներ, ավանդազրույցներ է ներկայացրել Գրիշա Մանուչարյանը՝ «Մթնաձոր», «Սև լիճ», «Հարսնաձոր»...

Եվ ինչպիսի համ ու հոտով եք բնական փայլի բերել Սյունյաց աշխարհի վեհությունը, սյունեցու արժանապատվությունը, որ դրված են այդ ստեղծագործությունների հիմքում:

– Ընդամենը երևի թե չորս լեգենդ է նա գրել: Չորս լեգենդն էլ ես մշակել եմ: Դրանք Ձեր թվարկածներն են ու «Դավիթ Բեկ և Մելիք Ֆրանգյուլ» լեգենդը:

Առնվազն հինգ անգամ ես վերադարձել եմ այդ լեգենդների մշակմանը. ամբողջական հատվածներ ու առանձին քառատողեր վերաշարադրել եմ, իսկ բազմաթիվ քառատողեր խմբագրել եմ ու վերախմբագրել:

Կարճ ասած՝ այդ լեգենդների մեջ եզակի քառատողերի իմ գրիչը չի կպել: Չափածո խոսքի գնահատման իմ ընկալումներն ինձ իրավունք են տալիս հայտարարել, որ թե բովանդակային առումով, թե իրենց գեղարվեստականությամբ այդ լեգենդներն այսօր բանաստեղծական կատարելությամբ են շնչում:



Գորիսի Սուրբ Գրիգոր
Լուսավորիչ եկեղեցի

Ասվածին պիտի պարզապես հավելեմ, որ իմ կողմից հնչեցված այս ինքնաբավ կարծիքը բազմաթիվ ընթերցողներ անվերապահորեն կիսում են:

– Քչերը գիտեն, որ համագործակցում եք «Սյունյաց երկրի» խմբագրակազմի հետ և այդ պարբերականի գեղարվեստական խորհրդի նախագահն եք: Ինչպե՞ս ստացվեց-ծնվեց Ձեր «արյունակցությունը» «Սյունյաց երկրի» հետ:

– Մեր համագործակցության սկիզբը դրվեց այն ժամանակ, երբ առանց կանխակալ տրամադրվածության, Սամվել Ալեքսանյանի մեջ տեսա տաղանդավոր լրագրողին՝ հայտնաբերելով նրա մեջ նաև հայրենանվեր խմբագրին: Որքան հիշում եմ, Ձեր օգտագործած բառի եզրույթով ասած՝ մեր «արյունակցության» սկիզբը դրվել է 2013 թ.:

Տասներկու տարի առաջ «Սյունյաց երկիր» թերթին արժևորած, հայտարարության պես արտաբերած իմ գնահատանքի խոսքն այսօր էլ նույն ուժգնությամբ կարող եմ հնչեցնել: Ահա տարիներ առաջ հնչեցրածս, հայտարարագիր հիշեցնող այդ խոսքը. «Ազգային հոգեկերտվածքի վրա խարսխված համամարդկային ընկալումներն են խոսքի ազատության՝ «Սյունյաց երկիր» թերթին ուղեկցող գաղափարական չափորոշիչները»: Ասվածին կավելացնեի, որ նման չափորոշիչներով առաջնորդվող թերթի հետ համագործակցելն ինձ համար մեծ պատիվ է:

– Օրհներգությունն էլ գրականության և արվեստի ժանր է: Եվ Տիգրան Գրիգորյանին այդտեղ ենք տեսնում նաև...

Օրհներգական ստեղծագործություններից հիշում եմ Հայաստանի Հանրապետության օրհներգի Ձեր տարբերակը, երբ մրցույթ էր հայտարարվել:

Ծանոթ եմ Գորիս քաղաքի օրհներգին, Գորիսի պետական քոլեջի օրհներգին, Գորիսի պետհամալսարանի օրհներգին. բացառիկ հաջողված գործեր են: Ինչպե՞ս է Տիգրան Գրիգորյանը դարձել օրհներգագիր:

– Օրհներգի տեքստ գրելը ես միշտ համարել եմ բանաստեծական խոսքի ամենաբարդ տեսակներից մեկը: Մասնավորապես, պետական օրհներգի տեքստ գրելու պարագայում՝ հեղինակը պիտի կարողանա միլիոնավոր մարդկանց հոգիներում նվիրական զգացմունքներ արթնացնող, նրանց հարազատացնող խոսք հնչեցնել:

Պիտի խոստովանեմ, որ իմ ստեղծագործական գործունեության ընթացքում մտքիս ծայրով անգամ չէի անցկացրել, որ երբևէ օրհներգ կգրեմ: Միշտ համարել եմ դա բավականին պատասխանատու և հանդուգն հանձնառություն:

Սակայն 2015 թ. «Սյունյաց երկիր» թերթում՝ Մեծ Եղեռնի հարյուրերորդ տարելիցին նվիրված համարում, հանդիպելով Հայաստանի գործող օրհներգի տեքստին և առաջին անգամ, սևեռված տեքստի ասելիքի վրա, լրջորեն ընթերցելով՝ տեսա, որ այն իրականում մեր գրական լեզվի կայացման առաջին փուլի խրթին հայերենով շարադրված, հայ մարդուն իր պետականությամբ ոգեշնչելու ընդամենը տարտամ ճիգեր պարունակող, մի բավականին ժամանակավրեպ խոսք է: Եվ այդ պահին ինձ պարուրած տպավորությունն էլ «ստիպեց», որ օրհներգի նոր տեքստ գրելու խնդիր դնեմ իմ առջև: Ու ես սկսեցի փորձել, հենց Բարսեղ Կանաչյանի գրած գործող օրհներգի երաժշտական չափին համահունչ, պետական օրհներգի կոչման հավակնող խոսք գրել: Եվ, կարելի է ասել, ես կարողացա դա անել:

Այդ խոսքը 2015 թ. լույս տեսած «Անմահության համանվագ» ժողովածուիս մեջ ընդգրկեցի՝ հույս ունենալով, որ այն որոշակի քաղաքական բարենպաստ հանգամանքների պայմաններում գուցե երբևէ կարողանա փոխարինել գործող օրհներգի տեքստին: Իսկ ավելի խորքային ճշմարտությունն այն է, որ, իրականում, ինձ վերջնականապես օրհներգագիր դարձրեց կամ ինչպես ինքս եմ երբեմն կատակով ինձ նման եզրույթով որակում՝ օրհներգիչ դարձրեց Սամվել Ալեքսանյանը:

Մեր հերթական զրույցներից մեկում նա ինձ խնդրեց՝ Գորիսի պետական քոլեջի համար օրհներգի խոսք գրել: Ճիշտն ասած՝ այդ պահին անգամ չէի հիշում, որ օրհներգի ժանրին ես մեկ անգամ արդեն անդրադարձել եմ: Նրա խնդրանքն իրականացնելն իմ ուժերից վեր համարելով՝ տեղում հրաժարվեցի: Սակայն մեր հեռախոսազրույցից հետո մտքերս ինքնաբերաբար սկսեցին պտտվել Գորիսի պետական քոլեջի շուրջ:

Նախ մտաբերեցի, որ այդ կառույցը խորհրդային տարիներին անվանվել է Գորիսի մանկավարժական ուսումնարան: Հետո հիշեցի, որ այդ ուսումնական հաստատությունն են ավարտել հայրս՝ Արտաշես Գրիգորյանը, քեռիս՝ Գրիշա Մանուչարյանը և ինձ հոգեհարազատ բազմաթիվ այլ անձինք: Հիշեցի նաև, որ դպրոցական ուսումնառությանս տարիներին մեզ դասավանդող ուսուցիչների 90 տոկոսից ավելին իրենց նախնական կրթությունն ու ուսուցչի որակավորումը ստացել էին հենց այդ հաստատությունում: Հիշեցի նաև, որ այդ ուսումնարանն էր ավարտել նաև արձակագիր Սերո Խանզադյանը:

Երբ մտքերս ինձ ավելի հեռու տարան, հստակ երևակվեց, որ Սյունիքը, Վայոց ձորը և Արցախն ընդգրկող հսկա տարածաշրջանում Խորհրդային Միության կայացման սկզբնական շրջանում Գորիսի մանկավարժական ուսումնարանը միակ կրթական հաստատությունն է եղել, որն ուսուցչի որակավորմամբ շրջանավարտներ տալով՝ այդ հսկայական տարածքում գտնվող դպրոցներին, կարելի է ասել՝ ուսուցիչների մատակարարման գործառույթ է իրականացրել:

Մի խոսքով՝ այդ ուսումնական հաստատության անցած երկարամյա ճանապարհը, նրա վաստակն ու տարածաշրջանում ունեցած անընդգրկելի ավանդն ինձ ներշնչանքի գիրկը նետեցին, և ես կարողացա երկնել Գորիսի պետական քոլեջին նվիրված օրհներգի իմ տեքստը:

Երբ այն արդեն փոխանցել էի Սամվել Ալեքսանյանին, կինս, ով իմ ստեղծագործությունների առաջին ընթերցողն է, ասաց, որ ստիպված պիտի լինեմ Գորիսի պետական համալսարանի համար էլ օրհներգ գրել, քանի որ եղբայրդ՝ Զարեհ Գրիգորյանը (նա Գորիսի պետական համալսարանի պրոռեկտորի պաշտոնն էր զբաղեցնում) հաստատ կնեղանա, երբ իմանա, որ Գորիսի պետական քոլեջի համար օրհներգի տեքստ ես գրել, իսկ իրենց ուսումնական հաստատության համար չես գրում:

Նրա խոսքերի մեջ ճշմարտություն կար, ու ես, առանց եղբորս տեղյակ պահելու, սկսեցի կենտրոնանալ Գորիսի պետական համալսարանի համար օրհներգի տեքստ գրելու վրա, մանավանդ հեռավոր 1976 թ. ինքս էլ այդ հաստատությունն էի ավարտել, որն այն ժամանակ Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղի կարգավիճակում էր գործում:

Ու կրկին ինձ հաջողվեց մեր համալսարանի նշանակությունն ու կոչումը ոգեղեն արժևորմամբ պանծացնող, բանաստեղծական ընդգրկուն ու ամփոփ ասելիքով խոսք հնչեցնել: Դրանից որոշ ժամանակ անց վաղեմի ընկերս՝ գեղանկարիչ Ժիրայր Մարտիրոսյանը, երևի թե տեղյակ լինելով Գորիսի պետական համալսարանի օրհներգի տեքստի իմ հեղինակ լինելու փաստից, մեր հեռախոսազրույցներից մեկի ժամանակ ասաց, որ Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը Գորիս քաղաքի օրհներգ ունենալու մասին ցանկություն է հայտնել ու իր կողմից ավելացրեց, որ մեր քաղաքի համար օրհներգի բարձրարվեստ խոսք գրելու ունակ հեղինակի որակներ՝ միայն իմ մեջ է տեսնում: Օրհներգերի հանդեպ ունեցածս ակնածանքն ու, ինչու չէ, նաև վախն ինձ կրկին զգուշավորության մղեցին, ու ես ոչ թե խոստացա, որ կգրեմ, այլ ասացի՝ կփորձեմ:

Սիրելի քաղաքիս անպատմելի գեղեցկությունն արժևորող, ծնրադիր երկրպագությամբ հնչեցրածս այդ խոսքն էլ կարողացա օրհներգին բնորոշ հուզական ոգեղենությամբ ավարտին հասցնել: Ու վերջապես 2019 թ. արձագանքելով ՀՀ Ազգային ժողովի փոխխոսնակի կողմից շրջանառության մեջ դրված՝ գործող պետական օրհներգն Արամ Խաչատրյանի գրած Խորհրդային Հայաստանի օրհներգի երաժշտությամբ փոխարինելու գաղափարին ու հայտարարված մրցույթին՝ գրեցի Հայաստանի օրհներգի ևս մեկ տեքստ:

Ու ինչպես մնացած չորս դեպքում՝ այս օրհներգում էլ ինձ հաջողվեց, տողերի որոշակի սահմանափակ ծավալ ենթադրող, օրհներգին բնորոշ սեղմության մեջ ընդգրկուն և ավարտուն ասելիքով հուզական ու համոզիչ բանաստեղծական խոսք շարադրել: Սակայն այդ մրցույթն այդպես էլ մնաց կես ճանապարհին և արդյունքների ամփոփման փուլ չունեցավ:

Սա է օրհներգագիր դառնալուս ողջ պատմությունը, որում, կարելի է ասել առանցքային դերակատարություն է ունեցել Սամվել Ալեքսանյանը:

– Ձեր անցած ճանապարհի ուշագրավ էջերից մեկն էլ Գորիսում շախմատի դպրոցի հիմնումն է և ընդհանրապես շախմատի ոլորտում Ձեր ծավալած գործունեությունը: Հիշում եմ Ձեր հարցազրույցը՝ այդ բնագավառում կատարած գործերի մասին: Շարունակո՞ւմ եք ապրել շախմատի աշխարհում, թե՞...

– Խորհրդային Միության փլուզումից հետո Գորիսում շախմատը «վերակենդանացնելու» ու վերստին հանրայնացնելու, ինչպես նաև մատաղ սերունդների մեջ այդ խաղի նկատմամբ սեր արթնացնելու առումով, երևի թե մեր քաղաքում անուրանալի ներդրում ունեմ:

Գորիսում շախմատի դպրոցի հիմնադրման օրից մինչև 2021 թ., այսինքն, մինչև այդ կառույցի՝ Գորիսի մանկապատանեկան մարզադպրոցի մեջ ընդգրկվելը՝ 21 տարվան մոտ ժամակահատված, եղել եմ այդ դպրոցի տնօրենը: Իմ ղեկավարման տարիներին մեր դպրոցի սաները մարզային և հանրապետական մրցաշարերում կարողացել են բավականին ակնառու արդյունքներ գրանցել:

Ինչ վերաբերում է Ձեր այն հարցին, թե շախմատի աշխարհում շարունակո՞ւմ եմ ապրել, պիտի պարզապես ասեմ, որ յուրաքանչյուր մարդ շախմատով կյանքում հիմնավորապես հիվանդանում է մեկ անգամ, և դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ նա սկսում է հասկանալ այդ խաղի նրբություններն ու գեղագիտական բավականություն ստանալ նրանում իրականացվող շախմատային կոմբինացիաներից: Այնպես որ, իմ դեպքում՝ շախմատով չապրելը վաղուց անհնար է դարձել:

Հատկապես ներկա իրականության մեջ շախմատն ինձ համար թմրադեղի է վերածվել: Հիմնականում օրերս անց եմ կացնում համացանցում՝ հեռակա մրցակիցների հետ շախմատ խաղալով: Խաղն ինձ կլանելով՝ արտաքին աշխարհից ժամանակավորապես կտրում է և օգնում, որ հոգևոր ու գոյաբանական մեր օրհասական իրականության վրա անընդհատ սևեռված՝ հոգեխանգարումների գիրկը չընկնեմ: Մի խոսքով՝ վերջնականապես չցնորվելու համար իմ օրվա ժամանակի մեծ մասն անց եմ կացնում, կարելի է ասել՝ «շախմատային նիրվանայի» մեջ:

Իմ նախկին սան, իսկ 2004 թ. շախմատի դպրոցի մարզիչ Վարդան Քարամյանի հետ այսօր էլ մշտական կապի մեջ եմ և տեղեկացված եմ լինում դպրոցում տեղի ունեցող բոլոր իրադարձություններից:

– Մեր և Ձեր բնօրրան Սյունիքը բախտորոշ ժամանակներ է ապրում, փորձության է ենթարկվում ազգային-քրիստոնեական մեր արժեհամակարգը, վտանգված են մեր անկախ պետականությունն ու ինքնիշխանությունը:

Գրականագիտությունը, գրականությունը (որոշ բացառություններ չհաշված) կողք են կանգնել, անտարբեր հայեցողի դերն են նախընտրել: Ինչո՞ւ այսպես ստացվեց, ի՞նչ անել:

– Եթե «Ինչո՞ւ այսպես ստացվեց» Ձեր հռետորական հարցը ներկա իրականության ամբողջական համապատկերի կտրվածքո՞վ եք հնչեցնում՝ դրան լիարժեք պատասխան տալու համար մի քանի հարյուր էջանոց գիրքն էլ գուցե չկարողանա սպառիչ պատասխան պարունակել: Իսկ թե ինչո՞ւ իրեն անկախ հռչակած Հայաստանի 3-րդ հանրապետության վերջին երեսուն տարին այս վերջաբանն ունեցավ՝ տարընթերցումները թողնելով Ձեր հայեցողությանը՝ կարող եմ ընդամենը մեկ նախադասությամբ պատասխանել. «Դրա հիմնական պատճառը հայ էթնիկ տեսակի որոշակի հատվածի մեջ բույն դրած տիեզերամասշտաբ ընչաքաղցությունն էր ու մի շատ ավելի՝ հսկայական զանգվածի ներկայացուցիչների հոգիներին ձյութված անպարագիծ չարությունն ու նախանձը»:

Ինչ վերաբերում է մեր գրականության հայեցողական դեր ստանձնելու Ձեր դիտարկմանը, ես այն կարծիքին եմ, որ դրա մեջ էլ ինչ-որ տեղ հանկարծահաս ու անհավատալի այս իրականությունից բխող օրինաչափություն կա: Իր հայրենիքի գոյաբանական անվտանգությունն անվիճարկելի արժեք համարող ու հայրենիքն իր հոգում կրող իսկական գրող անհատին, երբ հայրենիքին ցավի մեջ ներքաշած հանգամանքների ավարտն էլ հստակորեն չի նշմարվում, երևի թե միայն քաղաքացիական կեցվածք դրսևորելու ընտրություն է տրված լինում և հրապարակագրությամբ հոգում կուտակված ցավը դատարկելու հնարավորություն: Ասածս այն է, որ մխիթարություն չգտնող հոգեվիճակում հայտնված գրողը, ով առաջին հերթին՝ գերզգայուն մարդու տեսակն է ներկայացնում, իրեն պարուրած ցավալի իրականության մեջ՝ տվյալ պահին, խաղաղված հոգով գեղարվեստական լիարժեք արձակ ստեղծագործություն չի կարող արարել: Քանի որ այդպիսի իրականության մեջ ամեն ինչ անընդհատ անկման մեջ է գտնվում:



Գորիս, դրվագներ բնաշխարհից

Գուցե քաղաքացիական կամ հրապարակախոսական բնույթի գործեր ոմանց մեջ պահի տակ բանաստեղծական պոռթկմամբ երկնվեն: Համենայնդեպս, նման փորձերի ֆեյսբուքյան հարթակում ես հանդիպել եմ:

«Ի՞նչ անել» հարցը շատ պարզ ու հստակ պատասխան ունի. միանշանակ պետք է ազատվել մեզ հրամցված այս «ծուռ հայելիների» իրականությունից:

– Մեզ, անշուշտ, հետաքրքրում են Ձեր ծրագրերը...

– Այդ հարցի առնչությամբ ես պարզապես կանդրադառնամ այն իրականությանը, որը պարուրել է մեզ, և կփորձեմ ներկայացնել այդ իրականության հանդեպ ունեցածս վերաբերմունքը: Որտեղ, ինձ թվում է, Դուք կարող եք գտնել այդ հարցի թե ուղղակի, թե անուղղակի պատասխանս:

Մեր հասարակությունն ապրում է խորը բարոյահոգեբանական ճգնաժամ, այն ատելության համաճարակով է բռնկված: Հանրային պառակտված իրականության մեջ մարդիկ լիովին կորցրել են ապրումակցության զգացումը: «Բաժանիր, որ տիրես» սատանայական ասույթը՝ պետական մակարդակով հավատամքի վերածված, ամեն օր սնուցում ու խրախուսում է այս իրավիճակը:

Ամեն ինչ գլխիվայր է շրջվել: Տգիտությունը գերակա արժեք է հռչակվել, կեղծիքը՝ ճշմարտություն: Հոգևոր արժեհամակարգով առաջնորդվող մարդկային գոյության կերպին փոխարինելու է եկել զգայական, իսկ եթե ավելի ստույգ հոմանիշ օգտագործեմ՝ պիտի ասեմ՝ կենդանական կացութաձևը: Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը զրոյական վիճակի է հասցված: Այսօր, իրականում, արդեն հայոց պետականության լինել չլինելու հարցն է դրված զոհասեղանին: Եվ այս օրհասական իրականության ֆոնին մեր ժողովրդի գոյաբանական խնդիրների պատասխանատու անձանց «քաղաքագիտական» միտքը բուլվարային ասեկոսեների ողբերգական մակարդակի էժանագին իմիտացիաներով՝ անալիտիկ մտածողությունից զուրկ զանգվածին մանիպուլացնելով է զբաղված:

Հանրային կյանքի բոլոր ոլորտների անանախադեպ դեգրադացիայի հետևանքով հասարակության հիմնական հատվածը խարխափում է կործանարար մոլորությունների մեջ: Այս ազգային ու արժեհամակարգային շարունակական անկման իրականության մեջ ոգեշնչման աղբյուր հանդիսացող ոչ մի դրական կետ չեմ տեսնում, որն ինձ ոգևորելով՝ կարողանար հուսադրել ու վերադարձնել ստեղծագործական տիրույթ: Մեր պետականության հերթական անկման ականատեսը դառնալով՝ հոգիս երբեմն-երբեմն դատարկում եմ ֆեյսբուքյան հարթակում՝ հրապարագրություններ գրառելով: Սակայն պատեպատ զարկվելու այդ անօգուտ «զբաղմունքից» էլ եմ լիովին հիասթափվել, քանի որ արդեն տեղի ունեցող կամ ունեցած իրադարձությանը հրապարակագրությամբ անդրադառնալը՝ «կռվից հետո բռունցքները թափահարելու» ողորմելի տեսարանի եմ նմանեցնում:

– Եվ վերջում, իհարկե, բոլորիս գնահատանքը, երախտագիտությունը Ձեզ՝ Ձեր տեսակի համար, Ձեր ստեղծագործական ժառանգության և թողած լուսավոր հետքի համար, Ձեր քաղաքացիական կերպի համար: Հիշեք՝ ընթերցողը սպասում է Ձեր նոր ստեղծագործություններին:

Աստված Ձեզ պահապան:

– Աստված Հայաստանի Հանրապետությանը, Սյունիքին ու «Սյունյաց երկիր» թերթին էլ թող պահապան լինի: Իսկ ծննդյանս 70-րդ տարեդարձի առիթով «Սյունյաց երկիր» թերթի հատուկ անդրադարձի համար անչափ զգացված եմ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Մեղրու ճանապարհաշինական ընկերությունը, որի գործունեությանը ծանոթանալիս անհնար է չզգալ Արևիք աշխարհի սրտի հավերժական տրոփը

Սկիզբը՝ էջ 1

ենք այս օրերին զբաղվում...

Ուզում եմ շեշտել նաև՝ հատկապես միջպետական և հանրապետական ճանապարհների ասֆալտապատման գործում մեծ կարևորություն է ստանում տեխնիկական վերահսկողությունը, որ պարբերաբար է իրականացվում...

– Կատարված և կատարվող աշխատանքներից առանձնացնենք ճանապարհների ձմեռային պահպանության հարցը: Այս տարվա ձմեռային պահպանությունը տարբերվում է նախորդ տարիներից, քանզի Մ-2 ճանապարհին, միաժամանակ, կատարվում են Հյուսիս–հարավ մայրուղու կառուցման աշխատանքներ:

– Այո, ձմեռային պահպանությունն այս տարի բարդ է, և ձյան յուրաքանչյուր տեղումից հետո ավելի բարդ է լինելու: Ճիշտ նկատեցիք՝ Մ-2 միջպետական ճանապարհի որոշ տեղերում՝ զուգահեռ, իրականացվում է Հյուսիս-հարավ ճանապարհի շինարարությունը: Մեքենաների անիվների հետ խոնավ հողազանգվածը մտնում է ճանապարհ և ասֆալտի վրա առաջացնում լպրծուն շերտ, ինչը դժվարացնում է բեռնատարների երթևեկությունը՝ մանավանդ մեծ թեքությունների վրա:

Հյուսիս-հարավ ճանապարհի շինարարության գլխավոր կապալառուին խնդրել ենք հերթապահություն սահմանել ճանապարհի մաքրման գործում, և եթե բեռնատարները դժվարանում են շարունակել ճանապարհը՝ հնարավորինս օգնել:

Ինչ վերաբերում է մեր ընկերության կողմից ճանապարհների ձմեռային սպասարկմանը՝ թե Քաջարանի, թե Հ-63-ի լեռնանցքներում սահմանված է հերթապահություն, կուտակված է անհրաժեշտ քանակությամբ աղ ու ավազ: Ասեմ նաև՝ ընկերության մարդիկ առանձնահատուկ լրջությամբ են վերաբերում ճանապարհների ձմեռային պահպանությանը: Այդ գործի կազմակերպիչներից կուզեի նշել Հովհաննես Սարգսյանի անունը:

– Կարո՞ղ եք համառոտությամբ ներկայացնել Շվանիձորից դեպի Նռնաձոր կառուցվող ճանապարհը, թեև շինարարությունն իրականացնում է այլ կազմակերպություն:

– Սկզբից շատ թանկ նախագիծ էր առաջարկվել՝ տեխնիկական պարամետրերով նորմալ ճանապարհ...

Հետագայում աննպատակահարմար գտան այդչափ գումարներ ծախսել տվյալ ճանապարհի վրա, և գինը ոչ թե կիլոմետրով որոշվեց, այլ՝ գնից եկան կիլոմետր:

3,5 միլիարդ էր նախագծի նախնական արժեքը, մրցույթը շահեցին 2,5 միլիարդ դրամով: Եվ բնական է՝ թեքությունները պիտի կտրուկ լինեն, ճանապարհը պիտի նեղ լինի, ինչ-որ տեղ ասֆալտ չպիտի լինի, խոսքը 8,6 կիլոմետր ճանապարհի մասին է:

Մի քանի օր հետո մրցույթ է տեղի ունենալու Նռնաձորի ճանապարհի ասֆալտապատման համար:

– Ձեր ընկերությունը կմասնակցի՞ այդ մրցույթին:

– Անպայման: Մրցութային փաթեթը պատրաստել և ներկայացրել ենք...

– Ցանկանում ենք մի հարցի պարզաբանում ևս. եթե մրցութային գինը, օրինակ, հայտարարվում է X դրամ, իսկ մրցույթի հաղթող է դառնում մեկը, ով առաջարկում է հայտարարված գումարի կեսը: Արդյո՞ք մրցութային հանձնաժողովը չի հարցնում, թե ինչպե՞ս է այդքան գումարով իրականացվելու ճանապարհի շինարարությունը:

– Հիմնականում ճիշտ է Ձեր դիտարկումը, բայց կան հանգամանքներ, որ գնային առաջարկի անկմանը հիմնավորում են տալիս: Այսինքն՝ գինն իջնում են 20 տոկոսով՝ հաշվի առնելով իրենց սեփականության ներքո գտնվող գույքը, շինարարություն իրականացնելու համար անհրաժեշտ մեքենասարքավորումներ, համապատասխան շինարարական նյութերի արտադրության բազա ունենալու փաստը: Խոսքը, օրինակ, խճի և ավազի արտադրության մասին է: Այդ ամենն ունենալով՝ ընկերությունը հնարավոր է, որ 20-22 տոկոսով իջեցնի առաջարկվող գինը: Բայց դա ունի նաև սահման. չեմ պատկերացնում, որ 25 տոկոսից բարձր լինի առաջարկված գնի իջեցումը:

– Ձեր ղեկավարած ընկերությունը նաև հայտնի է ամրաշինական աշխատանքների ակտիվ գործունեությամբ, և շնորհիվ կատարված աշխատանքների՝ Մեղրիի տարածքում ունենք մերձակա սահմանների պաշտպանվածության նոր որակ: Եթե գաղտնիք չէ, ներկայացրեք այդ ոլորտում կատարված և կատարվող աշխատանքները:

– 2021 թվականից ակտիվորեն ընդգրկված ենք ամրաշինական աշխատանքներում: Ձեռք ենք բերել երեք խոշոր կառույցի շինարարության թույլտվություն, որոնցից մեկի շինարարությունն ավարտել ենք անցյալ տարի, մեկն ավարտում ենք այս տարի (մանրմունր գործեր են մնացել), մյուսն ավարտին կհասցնենք գալիք տարում: Ոգևորվում ենք նման կառույցներ իրականացնելով, շինարարության ամբողջ ընթացքում մեզ ուղեկցում է պատասխանատվության զգացումը...

Համագործում ենք տարածաշրջանում տեղակայված զորամիավորումների հետ, պարբերաբար իրար ձեռք մեկնում, կարողանում մեկս մյուսին օգտակար լինել:

Եվ ոչ միայն ամրաշինական կառույցների շինարարությամբ ենք զբաղված, այլև մարտական դիրքեր տանող ճանապարհների նորոգումով:

– Պարոն Գասպարյան, ընկերության կադրային-մասնագիտական ռեսուրսը...

– Ունենք 270 աշխատակից. այս թիվը որոշ ժամանակահատվածում նվազում է, ասենք՝ ձմռանը: Ունենք աշխատակիցներ Հայաստանի այլ տարածաշրջաններից, ինչպես նաև հարևան Իրանից ու Հնդկաստանից: Մեխանիզատորները հիմնականում Մեղրիից են՝ 30-35 հոգի:

Ցավով պիտի նշեմ, որ աշխատանք փնտրող տեղացիներից շատերը հակված չեն ընդգրկվելու շինաշխատանքներում:

– Օրեր առաջ երթևեկեցինք Մեղրի-Ծավ-Կապան ճանապարհով, Ձեր ընկերության կատարած աշխատանքը հիացմունք է պատճառում...

– Արդեն նշեցի՝ նորոգվել է 21,8 կմ ճանապարհահատված...

Արվածը պետք է պահպանել, բայց եթե 15 տոննայի փոխարեն 25 տոննա բեռ են բարձում մեքենային, ճանապարհի հերն անիծվում է:

2006 թվականին շահագործվեց այդ ճանապարհը, և ահա որոշ հատվածներում հիմնանորոգման աշխատանքներ պիտի կատարվեին: Եվ կատարեցինք:

Միշտ ասել եմ՝ ճանապարհը երեխայի նման է, պետք է սիրել, փայփայել, խնամել: Եթե չանես՝ ճանապարհը նախատեսվածից շուտ շարքից դուրս կգա: Կամ ձմռանը անխղճորեն աղ ու ավազ ենք շաղ տալիս, որ երթևեկությունը դյուրին լինի: Վարորդներից ոմանք ամառային անվադողերով են երթևեկում կամ մաշված անվադողերով, շղթա չեն օգտագործում, ինչն էլ հաճախ վթարային իրավիճակ է ստեղծում ճանապարհներին, խցանումների պատճառ դառնում:

– Անդրադառնանք Մ-2 ճանապարհին: Նկատեցինք՝ որոշ տեղերում ճանապարհից դուրս ենք եկել և կայանելու հրապարակ ստեղծել...

– Ավելորդ գրունտը, որ պիտի տեղափոխեինք լցակույտ, լցրել ենք ճանապարհամերձ հատվածներ՝ ստեղծելով հրապարակ, որ կոչվում է «ճանապարհի գրպան»: Դրա նշանակությունն այն է, որ անսարք մեքենաներն ամռանը տեղափոխվեն այդտեղ՝ նորոգելու նպատակով, իսկ ձմռանը, երբ ինչ-որ տեղ ճանապարհը փակ լինի, ուղղորդենք այդտեղ, որ կուտակումներ չառաջանան: Լավ կլիներ, եթե այդպիսի «գրպաններ» շատ ունենայինք...

– Այդ բոլորով հանդերձ՝ շինանյութերի խնդիրը կառուցողի համար հարցերի հարցն է, մանավանդ Հայաստանի նման կիսաշրջափակված երկրի դեպքում, ինչը խնդիրներ է հարուցում տնտեսավարող սուբյեկտների համար: Ձեր կարծիքը...

– Շինանյութերի հայթայթման խնդիր միշտ եղել է և յուրաքանչյուր շինարարի անհանգստացրել է: Գուցե իմ բախտը փոքրիշատե բերել է, որ սահմանակից եմ Իրանի Իսլամական Հանրապետությանը և շինանյութերի մատակարարման խոչընդոտներ չեմ ունեցել: Մանավանդ բիտումի ներկրումը միշտ համաչափ է եղել, և ընկերության ասֆալտգործարանը ոչ մի րոպե չի կանգնել: 21-22 կմ ճանապարհը կառուցել ենք 32 օրում, և դա կատարվել է շինանյութերի անխափան մատակարարման շնորհիվ:

Անշահախնդիր գործընկերային հարաբերությունների մեջ ենք Իրանի Իսլամական Հանրապետության հետ:

– Իսկ, ասենք, հայաստանցի շինարարին ձեռնտո՞ւ է Իրանից շինանյութ ներկրելը:

– Միանշանակ, այո: Օրինակ, գործարարը կարող է Իրանից 40 հազար դրամ արժեցող լուսամուտ ներկրել, որ Հայաստանում 55 հազար դրամ արժե:

Իրանից շինանյութեր, այլ ապրանքներ ներկրելիս շահում է այն ընկերությանը, որ ունի անմիջական և չմիջնորդավորված կապ:

– Ազատ Բենիամինի, եթե պատրաստի արտադրանք եք ներկրում Իրանից, օրինակ, պատուհան... Դա մեր ճարտարապետական ավանդույթներին, ազգային դիմագծին համընկնո՞ւմ է, թե՞...

– Իհարկե, չենք կարող բերել պատահական բան: Մենք ներկրում ենք այն ապրանքները, որոնք ընդունելի են պատվիրատուի կողմից, լինի դա հախճասալ, մարմարի սալ, լուսամուտ և այլն: Եթե պատվիրատուի համաձայնությունը չի լինում՝ չենք ներկրում:

– Նման մեծածավալ աշխատանքներ իրականացնելով՝ Ձեր ընկերությունը նաև որոշակի տեղ է զբաղեցնում հանրապետության 1000 խոշոր հարկատուների ցանկում: Որքանո՞վ է ընկերությունը մասնակցում պետական բյուջեի համալրմանը:

– Անկեղծ ասած՝ վերջին 7-8 տարում հաստատուն տեղ ունենք խոշոր հարկատուների ցանկում...

Հետաքրքրականն այն է, որ երբ համեմատում եմ մյուս տնտեսվարող սուբյեկտների ցուցանիշների հետ (եկամտային հարկ, շահութահարկ, ավելացված արժեքի հարկ)՝ մեզ մոտ ամենաբարձր ցուցանիշը լինում է եկամտահարկի գծով: Դրանից կարելի է հետևություն անել՝ մեր ընկերությունում աշխատավարձերը բավականին բարձր են՝ 450-500 հազար դրամ: Մի կողմից՝ լավ եմ զգում, որ այդպես է, մյուս կողմից՝ տագնապում եմ՝ եթե աշխատանքների ծավալները հանկարծ նվազեն, ի՞նչ է լինելու:

– Չկա մի օր, որ միջազգային մասշտաբով, զանգվածային լրատվամիջոցներով չհանդիպենք հրապարակումներ՝ այսպես կոչված «Թրամփի ուղու» մասին. ոմանք «Զանգեզուրի միջանցք» են անվանում, ոմանք՝ Թրիփփ, կարծիքներն էլ հակասական են: Կարո՞ղ ենք փաստել, որ այդ աշխատանքները դեռևս չեն սկսվել:

– Ծրագիրը հռչակված է, բայց տեղյակ չեմ՝ որտեղո՞վ է անցնելու, ե՞րբ է սկսվելու... Միայն ուզում եմ, որ այդ նախագիծը նպաստի իրական խաղաղությանը, երկաթուղին գործի, ճանապարհ լինի... Եվ այդ ամենը՝ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության ներքո...

– Պարոն Գասպարյան, մեր զրույցը տեղի է ունենում Նոր տարվա շեմին, ուստի և կուզեինք լսել Ձեր մաղթանքն Ամանորի և Սուրբ Ծննդի կապակցությամբ:

– Եզրագծին է մոտենում 2025 թվականը, ցանկանում եմ բոլոր շինարարական կազմակերպությունները բարեհաջող ավարտեն տնտեսական տարին: Եվ, իհարկե, շնորհավորում եմ իմ հայ ժողովրդի Ամանորն ու Սուրբ ծնունդը, մաղթում խաղաղություն, ստեղծագործ աշխատանք, թող բոլորն ապրեն արժանավայել կյանքով: Աստված պահապան հայ ժողովրդին, հայոց պետականությանը և, իհարկե, Սյունյաց աշխարհին ու Արաքսի հովտի մարգարիտ Մեղրիին:

ԶՐՈՒՅՑԸ՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ
25.12.2025

Մեղրիում՝ խմելու ջրի մաքրման ժամանակակից կայան. դարձյալ Ազատ Գասպարյանի ձեռագիրն է

Մեղրին հայտնի է իր ջրային պաշարներով: Բայց հատկապես ամռանը տարածաշրջանի ամենասուր հիմնախնդիրը խմելու և ոռոգման ջուրն է: Իսկ խմելու ջրի որակի վերաբերյալ բողոքներ քանիցս լսել ենք... Այդ վաղեմի խնդիրը, կարծեք, լուծում է ստանում Մեղրու ճանապարհաշինարարների ջանքերով:

Ճանապարհաշինական աշխատանքներից զատ՝ «Մեղրու ճանապարհների շինարարություն և շահագործում ձեռնարկություն» ՍՊ ընկերությունը մասնագիտացել է նաև սոցիալ-մշակութային-պաշտպանական կառույցների շինարարության մեջ: Իսկ ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանի մասին բարեկամաբար ասում են՝ նրա ձեռագիրն ամենուր է (խոսքը շինարարական աշխատանքների մասին է):

2025-ը ևս նշանավորվեց ընկերության կողմից սոցիալական մի կարևոր օբյեկտի կառուցումով ու շահագործմամբ:

Ինչևէ, 2023 թ. երկրորդ կեսին ընկերությունը Լիճք գյուղի տարածքում գտնվող հին մաքրման կայանի կողքին սկսեց նորի կառուցումը՝ նախագծային արժեքը 1 միլիարդ 300 միլիոն դրամ: Մեղրիում խմելու ջրի նոր մաքրման կայան ունենալու խնդիր վաղուց էր ծագել:

Կայանն այժմ վայրկյանում 80 լիտր ջուր կարող է մատակարարել Մեղրի քաղաքին:

Բացի դրանից՝ Լեհվազ գյուղում կառուցվել է օրվա կարգավորիչ ջրամբար, որտեղ պիտի ջուրը մանրէազերծվի:

Բանը միայն շենքը չէ, կայանը հագեցած է արդիական սարքավորումներով, որոնց պարագայում մարդկային միջամտությունը հասցված է նվազագույնի:

Նոր սարքավորումների տեղադրումն ու մոնտաժումն իրականացրել են հատուկ հրավիրված մասնագետները:

«Մեխանիզմների միջոցով կարգավորվում են ջրի ելքն ու մուտքը, եթե ջրի մաքրության հետ կապված խնդիր է լինում, ազդանշաններն իսկույն ահազանգում են», – պարզաբանում է ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանը, ով նաև մանրամասներ է ներկայացնում կառույցի շինարարության ժամանակ օգտագործված շինանյութերի, տեղադրված սարքավորումների մասին:

Շրջելով նորակառույց մաքրման կայանի հարկաբաժիններով՝ համոզվում ես, որ քիչ բան է մնում անելու: Բացի այդ՝ աչք են շոյում նոր տեղադրված սարքավորումները:

Մաքրման կայանի պետ Մուշեղ Ղարագյոզյանը ներկայացնում է կայան մտնող ջրի «ճանապարհորդությունը»:

– Ջուրը խառնարանից անցնում է դեպի ֆիլտրեր, մաքրվում: Եթե ջուրը պղտոր է լինում, օգտագործվում է ալյումինի սուլֆատ և կիր, որոնց շնորհիվ պղտորվածությունը նստվածք է տալիս, պարզ ջուրը ևս մի անգամ մղվում է դեպի ֆիլտր, ևս մի անգամ մաքրվում, նոր միայն շարունակում ճամփան դեպի սպառող, – մանրամասնում է մեր զրուցակիցը, նաև հավելում, որ գարնանային պղտորումների ժամանակ կարող են անհրաժեշտ քանակության ջուր մատակարարել սպառողին:

Ընկերության արտադրության գծով փոխտնօրեն Սևակ Սարգսյանն փոխանցում է, որ կայանի տեխնոլոգիական հատվածն ավարտին է հասցվել, մնում է էլեկտրական միացումները կատարել և քլորի դոզատորը տեղադրել:

Ընդհանրապես ջրի քանակությունը պայմանավորված է տարվա եղանակով: Ձմռանը նվազում է՝ կապված մերձակա աղբյուրների սառցակալման հետ, իսկ ամռանն ավելանում է, թեպետ այդ տարեշրջանում ջրօգտագործումը բնակչության կողմից ավելի մեծ չափեր է ընդունում:

Ընկերության արտադրության գծով փոխտնօրեն Սևակ Սարգսյանն էլ փոխանցում է, որ կայանի տեխնոլոգիական հատվածն ավարտին է հասցվել, մնում է էլեկտրական միացումները կատարել և քլորի դոզատորը տեղադրել:

Այսքանից հետո վերապահությամբ կարելի է ասել, որ սպառողին որակյալ ջուր է մատակարարվելու, քանզի մաքրման կայանից մինչև սպառող հասնող խողովակաշարն անցկացվել է անցյալ դարի 70-ական թվականներին, և ոչ միայն ջրի կորուստներն են անխուսափելի, այլև հինգ տասնամյակ ու ավելի վաղեմություն ունեցող խողովակներով հոսելով, չի բացառվում, որ ջուրն ինչ-որ չափով կորակազրկվի:

Ուրեմն և՝ Մեղրիում շարունակում է օրակարգային մնալ մաքրման կայանից մինչև Մեղրի քաղաք ձգվող խողովակաշարի նորացումը, ինչը, կարծում ենք, կզբաղեցնի պատկան մարմինների ուշադրությունը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
05.01.2026

Դարի կառույցը՝ «Հյուսիս–հարավ»-ը, նույնպես կյանքի է կոչվում Ազատ Գասպարյանի շինկազմակերպության ակտիվ դերակատարությամբ

Այս օրերի Մեղրին շինարարական մի հսկա հրապարակ է հիշեցնում: Իսկ կառուցման հևաբին դեռ Մեղրի չհասած ես առնչվում:

Ճանապարհաշինարարությունն իրականացնող իրանական կազմակերպությունն այս ու այնտեղ բազավորվել է: Մեծ քանակության շինտեխնիկա ես տեսնում, շինանյութեր, խախտվել է լեռնային տեղանքը, հզոր տեխնիկան ճեղքել է քարափի կուրծքը, հարթեցրել: Ժամանակ առ ժամանակ պայթեցումներ են լինում: Մի խոսքով, Մեղրի հասնելիս մեզ ծանոթ որոշ բնապատկերներն այլևս չկան...

«Հյուսիս-հարավ» միջանցքային ճանապարհն այստեղով է անցնում, ավելի ստույգ՝ Ագարակ-Քաջարան 32 կմ ճանապարհի մի հատվածը, որտեղ շինարարական աշխատանքներ է իրականացնում նաև «Մեղրիի ՃՇՇՁ» ՍՊ ընկերությունը՝ որպես ենթակապալառու կազմակերպություն:

Շինհրապարակում էլ հանդիպում ենք ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանին և «Հյուսիս-հարավի» Ագարակ-Քաջարան ճանապարհահատվածի շինաշխատանքները համակարգող Անդրե Մեջլումյանին, ով նաև ընկերության գլխավոր ճարտարագետն է:

Ընդհանրապես դժվար է պատկերացնել, որ այստեղ գտնվող պտղատու այգիները, մանավանդ Մեղրիում հայտնի գյուղատնտես Յուրի Շամիրիչի օրինակելի այգին, որտեղ բազմիցս եղել ենք, ճաշակել Մեղրիի անուշահամ միրգն ու բանջարեղենը, կարող են վերածվել շինհրապարակի...

Ազատ Գասպարյանը տեղեկացնում է, որ «Հյուսիս-հարավ»-ի շինաշխատանքներում իրենց ընկերությունը ներգրավված է 2024 թվականից: Այնտեղ, որտեղ Մեղրիի ճանապարհաշինարարները շինարարություն են իրականացնում, նախատեսված է կառուցել հինգ մեծ հանգույց, որ շինարարների լեզվով փոխհատումներ են կոչվում, կատարելու են այլ հողային և բետոնային աշխատանքներ: Նաև խոստովանում է, որ ընկերությունը կամրջաշինության ոլորտում մեծ փորձ չունի, հիմքից մի կամուրջ են կառուցել՝ 18 մետր թռիչքով, մի քանի կամուրջ նորոգել:

«Սերունդները գալու են ու գնան, այս կամուրջը լինելու է, ասում են՝ 100 տարի հետո բետոնը նոր-նոր սկսում է ամրանալ»:

Ընկերությանը վստահված հատվածում «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊ ընկերությունում 100 շինարար է աշխատում: Շինտեխնիկայի առումով էլ որևէ խնդիր չունեն: Դեռ ավելին, վերջին ժամանակներս լրջորեն վերազինվել են՝ ներկրել են «KOMATSU» մակնիշի էքսկավատորներ և բուլդոզերներ, ինքնաթափ մեքենաներ, գլդոններ, փոքր չափի մեքենաներ և էքսկավատորներ:

Այդ ամենում համոզվում ես՝ մի հայացք սահեցնելով շինհրապարակով:

Անդրե Մեջլումյանն էլ որոշ մանրամասներ է հաղորդում: Նա բարձրագույն կրթություն է ստացել Իրանի Իսլամական Հանրապետությունում՝ հմտանալով ճանապարհաշինության մեջ: Թեհրանից տեղափոխվել է Հայաստան, ճանապարհաշինության ոլորտում 20 տարվա փորձ ունի: Մեկուկես տարի է՝ «Հյուսիս-հարավ» ճանապարհի շինարարությունում է: Կառուցման տեմպից գոհ է, նաև գոհունակություն է արտահայտում այն առիթով, որ կամուրջների համար թռիչքային հեծանները տեղում են արտադրում: Իսկ չորրորդ հանգույցից հետո կառուցվող կամուրջը 240 մ երկարություն է ունենալու, որը «Հյուսիս-հարավ»-ը միացնելու է թունելին:

Այնուամենայնիվ, Ազատ Գասպարյանից փորձում ենք իմանալ, թե ի՞նչն է խոչընդոտում գործին: Պատասխանում է՝ որոշ էլեկտրական սյուների տեղափոխման խնդիր կա, որ խանգարում են շինարարության ընթացքին: Նաև հավելում, որ պատասխանատու և աշխատարար գործ են ստանձնել, հավաստիացնում՝ իր ղեկավարած ընկերությանը վստահված ճանապարհահատվածի կառուցումն ավարտին կհասցնեն 2027 թվականի վերջում:

Հրաժեշտից առաջ էլ փորձում ենք «դավադիր» հարց տալ՝ որքա՞ն կդիմանան իրենց կառուցած ճանապարհային հանգույցները: Նա էլ տակ չի մնում. **«Սերունդները գալու են ու գնան, այս կամուրջը լինելու է, ասում են՝ 100 տարի հետո բետոնը նոր-նոր սկսում է ամրանալ»:**

Հարավն ու հյուսիսը կապող ճանապարհի կարևորությունը ոչ ոք չի կարող թերագնահատել, բայց դրա կառուցումն արդյո՞ք բնապահպանական խնդիրներ չի՞ առաջացնում: Այս առումով Ազատ Գասպարյանը նշում է, որ նման խնդիրներ, իհարկե, առաջանալու են, մանավանդ հզոր պայթյուններից հետո, դրանք անխուսափելի են...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

«Սյունյաց երկրի» խմբագրատանը հյուրընկալվել են Թեհրանի «Իսկանյուզ» լրատվական կայքի ներկայացուցիչներ

Դեկտեմբերի 29-ին «Սյունյաց երկրի» խմբագրատուն են այցելել Իրանի Իսլամական Հանրապետության մայրաքաղաք Թեհրանի հեղինակավոր «Իսկանյուզ» լրատվական կայքի՝ միջազգային հաղորդումների խմբագիր Մաջիդ Ֆարոխին և կայքի՝ հանրային դիվանագիտության հարցերով փորձագետ Մեյսամ Ռեզա Զադեն:

Նրանց հետաքրքրել է «Սյունյաց երկրի» դիրքորոշումը հայ–իրանական հարաբերությունների ներկա վիճակի, «Թրամփի ուղու» կամ այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» վերաբերյալ:

Սամվել Ալեքսանյանը հարցազրույցի ընթացքում արտահայտել է և՛ լրատվամիջոցի ու նրա հետևորդների, և՛ բազմահազար սյունեցիների դիրքորոշումը՝ հյուրերին հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է հայ–իրանական և մասնավորապես Սյունիք–Իրան մշակութային կապերի հետագա ակտիվացմանն ու զարգացմանը, ապա, ըստ Սամվել Ալեքսանյանի, դրա համար առկա են բոլոր հնարավորությունները, նաև պատմական հիմքերը, մնում է խոսքից գործի անցնել:

«Իսկանյուզի» ներկայացուցիչները հայտնել են Իրանի Իսլամական Հանրապետությունում իշխող տեսակետը, որ Հայաստան–Իրան՝ հազարամյակներ շարունակ գոյություն ունեցած և գործող հաղորդակցության ուղիները որևէ երկիր՝ ինչ փաթեթավորմամբ կամ պատրվակով էլ ներկայացնի, չի կարող սահմանափակել և խոչընդոտների դեմ առնել:

Ըստ Իրանում իշխող մեկ այլ տեսակետի՝ անթույլատրելի է տարածաշրջանում գոյություն ունեցող պետական սահմանները վերանայելու ամեն մի փորձ, ինչի վերաբերյալ Իրանի Իսլամական Հանրապետության բարձրագույն իշխանությունն ունի հստակ դիրքորոշում:

Սամվել Ալեքսանյանի հետ հարցազրույցը «Սյունյաց երկրի» հարթակներով կիրապարակվի «Իսկանյուզի» թողարկումից հետո:

Ի դեպ, «Իսկանյուզի» հաղորդումները սփռվում են ոչ միայն Իրանի Իսլամական Հանրապետությունում, այլև Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում:

29.12.2025

Հայաստանում ՌԴ դեսպանատնից և ռուս-հայկական գործարար խորհրդից նվերներ սյունեցի երեխաներին

Կապանում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսության բացման առաջատար խմբի անդամները, «Ռոսիյանե» հասարակական կազմակերպության անդամների հետ, իրենց ավանդական Ամանորյա միջոցառման շրջանակներում այցելել են Սյունիքի մարզի Ագարակ, Դավիթ-Բեկ, Վարդանանք, Խդրանց, Եղվարդ, Ուժանիս և Կաղնուտ գյուղեր: Մոտ 400 երեխա Ամանորի շնորհավորանքներ և նվերներ է ստացել Հայաստանում Ռուսաստանի դեսպանատնից և ռուս-հայկական գործարար խորհրդից:

SYUNIK.TV
26.12.2025

Սյունյաց աշխարհի մեծանուն զավակ Աշոտ Մինասյանին, որ չարչարանաց ճանապարհին է

Մեծարգո Աշոտ Հրանտի, քաջակորով հրամանատար «Սիսական» ջոկատի

Ժամեր հետո հրաժեշտ կտանք 2025 թվականին և ոտք կդնենք 2026 տարվա՝ մեզ–մշուշով պատած ճանապարհին...

Մտքերով Ձեզ հետ եմ: Հիշում եմ մեր առաջին հանդիպումը. Շինուհայրում էր՝ 1992-ին, փետրվարյան ձյունառատ մի երեկո, լուսահոգի Ռուբիկ Ալեքսանյանի հյուրընկալ օջախում:

Սպարապետ Վազգեն Սարգսյանն էր՝ Արցախյան ազատամարտի ճանաչված զորահրամանատարների հետ: Սպարապետը կամեցավ, որ Դուք Չարենց արտասանեք:

Եվ սկսեցիք՝ «Ես իմ անուշ Հայաստանի...»:

Սպարապետը չկարողացավ իր հուզմունքը թաքցնել, երբ ավարտեցիք վերջին քառատողը.

«Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա,
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա,
Աշխարհի անցիր՝ Արարատի նման ճերմակ գագաթ չկա,
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում»:

Այդ օրվանից ի վեր՝ սխրանքներով լեցուն քո անցած ճանապարհն աչքիս առաջ է...

Իսկ հիմա Ձեզ եմ փոխանցում հազարավոր սյունեցիների, մեր խմբագրակազմի և անձամբ իմ սրտաբուխ շնորհավորանքն Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Մաղթանք էլ ունեմ. ստեղծված իրավիճակում պիտի որ առաջին հերթին ցանկանայի տոկունություն, կամք... Բայց ոչ, այդ մաղթանքի կարիքը Դուք չունեք, քանզի ինքդ ես՝ անվհատ վարքով, հայրենանվիրությամբ, քաղաքացիական պահվածքով այդտեղից մեզ տոկունության, անկոտրում կամքի դասեր տալիս:

Ուստի և աղոթում եմ միայն Ձեր առողջության համար...

Նաև ուզում եմ հիշեք՝ Ձեզ սպասում են ոչ միայն մանկահասակ և բժշկական հոգածության մշտական կարիք ունեցող երկու զավակդ, ինչպես և մյուս որդիներդ ու մերձավորներդ:

Ձեզ սպասում է Սիսական աշխարհը:

Սպասում են մարտական ընկերներդ, ովքեր քաջերի «Սիսական» ջոկատով երկիրը հայրենիք դարձրին, հայրենիքը՝ պետություն, անկախ պետություն:

Երկնային թագավորությունից Ձեզ հետևում ու Ձեր ազատության համար աղոթում են արևաբույր և լույսի համբույր, Աստծով լցված և հաղթանակած մեր տղերքը, ովքեր նահատակվեցին հայոց Արցախի ու հայոց արժանապատվության համար, որոնց թվում՝ դյուցազնական Աղվան եղբայրդ՝ իր ավիշով Սյունյաց սահմաններն օծած մարտիրոսը:

Ուզում եմ, որ համոզված լինեք նաև՝ հայոց պատմությունը, Սյունիքի պատմությունը

ոչ ոք չի կարողացել ու չի կարողանալու սրբագրել, վերաշարադրել: Եվ զինվորի ու հրամանատարի Ձեր փառապանծ կերպարը, օրինապահ քաղաքացու, ազգանվեր ու պետականանվեր գործչի Ձեր անունը եղել, կա ու մնալու է ընդօրինակման արժանի:

Ճակատագրի դառը հեգնանքով Դուք այսօր հայոց անկախ պետության զնդանում եք, այն պետության, որի անկախության, արժանապատվության, ինքնիշխանության և լինելիության համար ոչինչ չեք խնայել ու քանիցս հայտնվել մահվան դեմ հանդիման:

Եվ այսօրվա հորինված կարգավիճակդ, որքան էլ տարօրինակ ու անբնական է, նորովի է մյուռոնում քաջազնական Ձեր կերպարը և մոտեցնում լուսաբացը:

... Ու մինչև կիջնի 2025-ի վարագույրը, և կբացվի նոր տարվա դուռը՝ կուզենայի հիշեցնել մեր բազում զրույցներից մեկը՝ հայոց մեծ քնարերգու Համո Սահյանի, ավելի ճիշտ՝ նրա հայրենասիրական քնարերգության մասին...

Մարգարեաբար ու սարսափով տեսնում էր տեղի ունեցող իրադարձությունների բուն էությունը.

«Մեզ ասում են. – Դուք մերը չեք,
Մինչև անգամ դուք ձերը չեք,
Ձեր տեղը չեք, ձեր տերը չեք,
Դուք տերը չեք ձեր երդերի,
Տաճարների ու բերդերի...»:

Իսկ «Գերված աղբյուր Գյուլիստանի» գրական սրտափշուր ասքը...

Հայոց պատմական Գյուլիստանի գերված աղբյուրը շնչավորվում և զրույցի է բռնվում բանաստեղծի հետ.

«– Նախշուն աղբյուր Գյուլիստանի,
Աչքս առանց քեզ ի՞նչ անի:
– Աչքդ, ասեմ, ուր էլ գնաս,
Հեռվից–հեռու պահիր վրաս:
Աչքալուսանք կտանք շուտով՝
Ես ցուրտ, իսկ դու՝ տաք շշուկով»:

Չհավատալու պատճառ չենք ունենա (եթե բարձրանանք ծնկած վիճակից), որ հանճարեղ բանաստեղծի այդ երազանքն ու Գյուլիստանի լեզու առած աղբյուրի պատվիրանն ի կատար են ածվելու:

Ուրեմն, պատվելի հրամանատար, հետևիր առողջությանդ և աչքդ հետ պահիր...

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
29.12.2025

Դպրական ձեռնադրություն՝ Սյունյաց թեմում

Ս. թ. դեկտեմբերի 24-ին Սյունյաց թեմի առաջնորդանիստ եկեղեցում տեղի ունեցավ դպրական ձեռնադրություն Սյունյաց թեմի առաջնորդ գերաշնորհ տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանի ձեռամբ:

Սրբազան արարողակարգի ընթացքում ձեռնադրվողները կոչվեցին եկեղեցական ծառայության առաջին աստիճանին՝ ստանալով Սուրբ Եկեղեցուն ծառայելու օրհնությունն ու կոչումը: Թեմական առաջնորդն իր խոսքում անդրադարձավ դպրության աստիճանի խորհրդին, դպիրի կոչման պատասխանատվությանը և մաղթեց, որ նոր ձեռնադրյալները հավատարմությամբ ու նվիրումով ծառայեն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ Աստծո Սուրբ Աջի հովանու ներքո:

ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ
30.12.2025

Լույս է տեսել Գրիշա Սմբատյանի «Ստեմել» գիրքը



Սյունիքի հարազատ զավակ Ստեմելը՝ Ստեփան Մելիք-Փարսադանյանը, ցավոք անծանոթ է մեր հանրությանը: Թեև հազվադեպ, սակայն տասնամյակներ շարունակ հնչել է նրա անունը. այդուհանդերձ չի ճանաչվել ՍՏԵՄԵԼ մտավորականը, գրողը, լրագրողը, քաղաքական գործիչը, բժիշկը, մարտիկը, աքսորականը, վտարանդին ու անկոտրում մարդը: Պատանեկան տարիքից լինելով ՀՅԴ համակիր, հետագայում՝ կուսակցական գործիչ՝ նա ժամանակակիցն ու ականատեսն էր Սյունիքում տեղի ունեցող մի շարք իրադարձությունների: Նրա հրապարակումներում երկրամասի անցյալն է, նրա մարդիկ, պատմության թատերաբեմում վճռական դերակատարություն ունեցած ծանոթ ու անծանոթ գործիչներ, որոնց մի զգալի մասը հետագայում քաղաքական բռնաճնշումների ենթարկվեց, ինչպես ինքը:

Հայաստանի Ազգային արխիվում Ստեմելի «Գործ» չկա: Նրան տեսնում ենք «խմբակային» գործերում: Ստեմելի մասին տեղեկություններ հավաքելու համար օգնության է հասնում նաև ժամանակաշրջանի մամուլը, որի էջերում հայտնաբերել ենք նրա հրապարակումները, որոնք առնչվում են Սյունիքի և Արցախի՝ տարբեր ժամանակների պատմությանը, անցուդարձին, ազատագրական պայքարին: Հայտնաբերել ենք նաև վավերագրեր, վկայություններ, լուսանկարներ, աշխատել ենք ներկայացնել նրա ծննդավայրը, տոհմը, անվանի տոհմակիցներին: Ստեմելի հրապարակումներում բազմաթիվ ծանոթ և անծանոթ անուններ կան, որոնց մասին, հնարավորության սահմաններում, ներկայացրել ենք ծանոթագրություններում և տվել պարզաբանումներ: Հաճախ խորամուխ ենք եղել նրա հիշատակած իրադարձությունների էության մեջ, առաջին անգամ դրանց վերաբերյալ հրապարակել վկայություններ ու վավերագրեր: Այս ամենով հանդերձ, սակայն, կան ու կլինեն մեզ համար անհայտ, անհասանելի էջեր, նյութեր, վավերագրեր:

Սյունիքի նորագույն պատմության թանկագին աղբյուր է ՍՏԵՄԵԼԸ:

SYUNIK.NET

Սվարանցը սգում է իր արժանավոր զավակի՝ Արթուր Առաքելյանի մահը

Արթուր Լենդրուշի Առաքելյանը ծնվել է 1964 թ. դեկտեմբերի 18-ին, Գորիսի տարածաշրջանի Սվարանց գյուղում:

1982 թվականին խորհրդային բանակի շարքերում ծառայել է Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում:

Ծառայությունից հետո սովորել է Ռուսաստանի Դաշնությունում:

Հաջողակ գործարար էր, հիմնել է ցեմենտի գործարան՝ «Սվարանց ցեմենտ», որի տնօրենն էր, և «Царская усадьба» հյուրանոցային համալիրը:

Վախճանվել է 2025 թ. դեկտեմբերի 11-ին: Հուղարկավորվել է Ռուսաստանի Դաշնությունում, հոգեհանգիստը կազմակերպվել է Սվարանցի Սուրբ Հազարափրկիչ եկեղեցում:

Արթուր Առաքելյանը լույս աշխարհ է եկել Սվարանց գյուղում՝ Խոսրովի որդի Լենդրուշ Առաքելյանի (Թավադու) ընտանիքում: Վեց դուստրերից հետո ծնված արու զավակի աշխարհ գալը մեծ ուրախություն է պատճառել հարազատներին, համագյուղացիներին:

Թավադին պարզ ու բարի մարդ էր, ով պատրաստում էր գյուղացիների տան դռներն ու լուսամուտները և գյուղում բարի անուն էր վաստակել:

Բարեգործությունից անմասն չի մնացել Թավադու որդի Արթուր Առաքելյանը, ով հոր խորհրդով ձեռնամուխ եղավ Սվարանցի խոնարհված Սուրբ Հազարափրկիչ եկեղեցու վերակառուցմանը: Արթուրը մեծ լումա ունի նաև Արցախի Հանրապետությունում: Քրոջ՝ «Ղարաբաղ» ՀԿ նախագահ Սիրվարդ Գալստյանի միջոցով բարեգործական ծրագրեր է իրականացրել, որի մասին չէր սիրում բարձրաձայնել:

Արթուրը Ռուսաստանի Դաշնությունում մեծ կարողությունների տեր էր, սակայն նրա սիրտը Սվարանցում էր: Նյութապես օգնում էր համագյուղացիներին: Հայրենիքից հեռու լինելով՝ առիթը բաց չէր թողնում՝ նեցուկ լինելու համագյուղացիներին:

Սվարանցը սգում է իր արժանավոր զավակի մահը և ցավակցում հարազատներին ու մերձավորներին:

Արթուրի, Առաքելյանների և Սվարանցի ննջեցյալների հիշատակը հավերժացնելու համար եկեղեցու բակում օրերս տեղադրվեց «Կենաց ծառ» հուշակոթողը (հեղինակ՝ ժողովրդական վարպետ Վարազդատ Համբարձումյան):

Ինչպես կասեր Ամենայն հայոց բանաստեղծը՝ «Գործն է անմահ, լավ իմացեք, որ խոսվում է դարեդար...»:

ՍՎԱՐԱՆՑ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ

Կյանքից հեռացել է մեր ազատամարտի փառապանծ հրամանատարներից ևս մեկը՝ Համլետ Մկրտչյանը

Մահը վրա է հասել 2025 թ. դեկտեմբերի 22-ի վաղ առավոտյան:

Համլետ Արշավիրի Մկրտչյանը ծնվել է 1947 թ. մարտի 8-ին Գորիս քաղաքում ծառայողի ընտանիքում:

1963-64 ուսումնական տարում ավարտել է Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցը:

1977 թ. ընդունվել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի մաթեմատիկայի ֆակուլտետը և այն ավարտել 1981 թվականին:

1982 թ. աշխատանքի է անցել Գորիսի սարքերի գործարանի Խնձորեսկի մասնաճյուղում՝ արտադրության պետ:

1988 թվականից Գորիսի տրիկոտաժի արտադրական միավորման Վերիշենի ֆաբրիկայի տնօրենն էր:

1990 թվականին ընտրվել է ՀՀ առաջին գումարման ժողովրդական պատգամավորների Գորիսի քաղխորհրդի պատգամավոր:

1991 թ. հունվարի 21-ին՝ հանրապետության կառավարության առաջարկությամբ և ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության համաձայնությամբ, Համլետ Մկրտչյանը նշանակվել է կառավարության լիազոր ներկայացուցիչ Գորիս քաղաքում՝ քաղխորհրդի նախագահի իրավունքներով՝ այդ պաշտոնը վարելով շուրջ երկու տարի:

1997-98 թթ. եղել է Մեղրիի մաքսային ծառայության պետ, Սյունիքի տարածքային մաքսային վարչության պետի տեղակալ:

1999 թվականին Համլետ Մկրտչյանն ընտրվել է Գորիսի քաղաքապետ, ապա գլխավորել Գորիսի տարածքային էլեկտրացանցը:

2002-2004 թթ. Սյունիքի մարզպետի խորհրդականն էր:

Թեև տարբեր պաշտոններ է վարել, բայց եղել և մինչև կյանքի վերջ հանրային ընկալման մեջ մնացել է իբրև կենդանի խորհրդանիշ հայոց Արցախի համար մղված պայքարի: Վայելում էր Սպարապետ Վազգեն Սարգսյանի վստահությունը, համակրանքը:

1988-ից Արցախյան շարժման Սյունիքյան զանգեզուրյան թևի կազմակերպիչներից էր, Գորիսի շրջանի պաշտպանության խորհրդի նախագահը, ինքնապաշտպանական առաջին ջոկատների կազմակերպիչը Գորիսի տարածաշրջանում: Ակտիվ մասնակցություն է ունեցել Հայոց ազգային բանակի ձևավորմանը: Ինքն էր հանրապետության ՆԳ նախարարությանը կից ստեղծված հատուկ գնդի գորիսյան վաշտի առաջին հրամանատարը:

Որպես Գորիսի պաշտպանության խորհրդի նախագահ՝ 1989-92 թվականներին կարողացավ մոբիլիզացնել տարածաշրջանի ողջ ներուժը՝ հայոց արևելյան սահմանները պաշտպանելու, սահմանամերձ և սահմանապահ գյուղերի բնակչության արժանապատվությանը տեր կանգնելու համար:

Նրա գլխավորած ինքնապաշտպանական ջոկատները բազմաթիվ մարտական սխրանքներ են գործել՝ Գորիսի արևելյան և հյուսիսային սահմաններն անառիկ պահելու համար՝ դրանով իսկ հարստացնելով հայոց ազատագրական պայքարի փառքի տարեգրությունը:

Համլետ Մկրտչյանը մեծ հեղինակություն էր վայելում Գորիսի տարածաշրջանում, ինչի համար էլ արժանացել էր Գորիս համայնքի պատվավոր քաղաքացու բարձր կոչմանը:

Աչքի էր ընկնում մարդկային վեհ հատկանիշներով, ընկերասիրությամբ, հայրենի եզերքին անմնացորդ նվիրվածությամբ:

Ցավ էր ապրում հայոց Արցախի բռնազավթման, արցախահայության ողբերգական ճակատագրի, Սյունիքի սահմանամերձ մի շարք հատվածների օկուպացման համար:

Համլետ Մկրտչյանի հիշատակը վառ կմնա ոչ միայն նրա մերձավորների ու հարազատների հուշերում: Նրա անունն արժանապատիվ տեղ կգտնի նաև սյունիքյան ազատամարտի տարեգրության մեջ: Խունկ, աղոթք և բյուր օրհնություն նրա հիշատակին:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»

Սյունյաց Երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 13.01.2026թ.: